

Ամիրդովլաթ Ամասիացի

ՕԳՈՒՏ
ԲԺՇԿՈՒԹԵԱՆ



eMatenadaran.

Ամիրդովլաթ Ամասիացի Օգուտ Բժշկութեան

http://www.litres.ru/pages/biblio_book/?art=24430966

Օգուտ Բժշկութեան:

ISBN 9781772467857

Аннотация

Անատոմիային եւ ֆիզիոլոգիային վերաբերող տվյալները շարադրված են «Օգուտ բժշկության» աշխատության առաջին մասում: Ամիրդովլաթ Ամասիացու աշխատությունների հիմքը օրգանիզմի ամբողջականության գաղափարն է, ըստ որի, բոլոր օրգաններն ու հյուսվածքները, նրանց ձեւը, կառուցվածքը եւ մյուս առանձնահատկությունները նպաստում են ամբողջ օրգանիզմի բնականոն գործունեությունը: Ամիրդովլաթ Ամասիացին նկարագրել է սրտի, թոքերի, երիկամների, լյարդի, փայծաղի, ստամոքսի, աղիքների, միզասեռական օրգանների ձեւը, կառուցվածքը, դասավորությունը, դերն ու նշանակությունը: Նկարագրել է աչքի թաղանթների կառուցվածքն ու դերը, տեսողական նյարդերի ուղին: Ախտանշանակության, մասնավոր ախտաբանության եւ թերապիայի ասպարեզում կարեւոր են գարկերակի ուղիքն ու հաճախականության, մեզի բաղադրության փոփոխությունների տվյալները տարբեր հիվանդությունների ժամանակ: Ամիրդովլաթ Ամասիացին զբաղվել է նաեւ աստղաբաշխության հարցերով:

Содержание

Համառոտագրություններ	5
Գիրս այս կոչի ստաժուս	6
ՄԱՄՆ ԱՌԱՋԻՆ ՈՒՍՈՒՄՆ	16
ԲԺՇԿՈՒԹԵԱՆ	
Ա	16
ԱՌԱՋՆ ՈՒՍԱՆԻԼ ԶԲԺՇԿՈՒԹԵԱՆ	16
ԶՉԱՔՆ ԵՒ ԽԱՓԱՆԵԼ ԶՄԱՀԱՑՈՒ	
ԴԵՂՈՑՆ ԶՕՐՈՒԹԻՒՆՆ	
Բ	21
Գ	25
Դ	27
Եւ այս է Դ բաժանումն բնութեան	30
խառնուածոց կամօքն աստուծոյ. ամէն:	
Իսկ թէ ո՛րպէս ծնանի տղան ի մօրն ի	35
փորն այսպէս գիտացիր:	
Եւ մարդակազմութեան յառաջն գոսկերքն	36
յիշենք եւ այլն ի կարգաւ աստուծով:	
Ե	37
Կերպ ստեղծման գլխուն եւ ըղեղանն այս է	40
Կերպ ստեղծման սրտին	42
Կերպ յօրինվածոց լերդին թէ որպէս է	44
Կերպ ստեղծման փայծղանն թէ որպէս է	44
Կերպ ստեղծման թոքին թէ որպէս է	45

Կերպ ստեղծման լեղուին թե որպէս է	47
Կերպ ստեղծման երիկամացն թե որպէս է	48
Կերպ եւ պատմութիւն վասն ստամոքսին	48
Կերպ աղէճորտերուն եւ յօրինվածոցն նոցին	50
Կերպ ստեղծման հալաբշտին թե որպէս է	52
Կերպ վասն կազմութեան աշացն թե որպէս է	52
Կերպ յօրինվածոց ականջացն թե որպէս է	56
Կերպ ստեղծման քթին թե որպէս է	56
Կերպ շրթնացն լեզվին թե որպէս է	57
Վասն ստեղծման ձեռացն թե որպէս է	58
Կերպ յօրինվածոց ծծերուն թե որպէս է	58
Կերպ ձվերուն եւ պատմութիւն	59
Конец ознакомительного фрагмента.	60

Ամիրդովլաթ Ամասիացի Օգուտ Բժշկութեան

Համառօտագրութիւններ

Ձ= Վաղ. Պետ. Մատեն. ձեռագիր հմր 414

Ա= Վաղ. Պետ. Մատեն. Ամիրտովլաթի ինքնագիր

Բ= Վաղ. Պետ. Մատեն. հմր 732

Գ= քժ. Լ. Յովհաննիսեանի

Դ= Վաղ. Պետ. Մատեն. հմր 6275

Ե= Վաղ. Պետ. Մատեն. հմր 733

Չ= Վաղ. Պետ. Մատեն. հմր 734

Աճ.= պրոֆ. Աճառեան չր.

Անգ. անպ. = Անգլիաց անպլտ. հրատ. Կ.

Բասմաջեանի:

Խորշ. = քժ. Խորշուդ Մելիք – Փարսադանեանի եւ
աւագ դեղագործ Յակոբ Սէպլետճեանի Մեկնաբանութիւն
(անտիպ):

Գիրս այս կոչի ստաժում

Յանուն Աստուծոյ գթածին եւ ողորմածին որ է օրհնեալ յաիտեանս ամէն: Գոհանալով փառաւորենք զնա, որ զարարածս ստեղծեաց, գերկինքն եւ գերկիր, զմարդ եւ զանասուն եւ զամենայն կենդանի, եւ զամենեսեան կերակրեաց իւր շնորհիւն, եւ նմա փառք յաիտեանս. ամէն:

Եւ այսպէս էր գրեալ գրքիս շինողն, թէ յորժամ ես այս արուեստիս հնուտ եղայ եւ տեսայ շատ գրեանք որ շինած էր ի յայս արուեստն եւ շատաբանած, եւ մարդ կատարեալ չէր իմանար. եւ չկար գիրք մն, որ ինքն փոքր եւ համառօտ եւ օգուտ լինէր եւ մարդ օգտէր, որ ինքն հեշտ լինէր եւ փորձած եւ օգուտ:

Կամ եղեւ ինձ որ յայս յարուեստս շատ դովի ցուցանենք եւ գրենք զբժշկութեան չաքսն եւ ստուղուսաթն, որ է տարերքն, հուրն, օդն, ջուրն, հողն, եւ զմիզաճն, որ է բնութիւնն, եւ զխառնուածն, որ է սավտան եւ պալղամն եւ արիւնն եւ սաֆրան. զստեղծուածքն մարդուն եւ զկազմութիւնն ամենայն անդամոցն եւ զթպտիրն առողջութեան, եւ ճանաչել զերակն եւ զգոզն, որ է դարուրան, եւ զճեռնալուան, եւ զպօհրան, զմահու եւ զկենաց նշաննին, եւ զստաժումն ամէն խլտին ի մի տեղ, եւ զատ ի զատ զբնութիւնն եւ զօրութիւնն, զշահն եւ զնշանն առաջագիտութեան ամէն հիւանդին. եւ զիտենալ զօղերն ամէն, եւ զտարուն Գ եղանակն, եւ զբնութիւն նոցա, եւ զպատճառն եւ զնշանն Ա

Ա-ին եւ խառնուածին, եւ շինել զխառնուած դեղերն, որ է թարքիպնին:

Այսպէս գիր մն շինեցի եւ անպիտան եւ անարժան նուաստ ծառայս Աստուծոյ Ամիրտովաթ բժիշկն Ամասիացին ի մայրաքաղաքն ի Ֆիլիպպ, ի թվականութեանս հայոց ՉԺԵ ամին եւ ամսոյն ի դեկտեմբերի ԻԵ-ին, օրն հինգշաբթին, եւ ծնունդն էր փրկչին այլազգեաց: Եւ այնչափ որ իմ ուժն ընկերեց՝ նա ջանացի զսա կատարել: Եւ ով կարդայ կամ օրինակէ, թէ՛ եկեղեցական է, թէ բժիշկ է՝ մի՛ խափանէք, եւ ով որ ջանայ որ կտրէ մի թուղթ ի սմանէ եւ կամ գողանայ՝ նա բանադրած է ՅԺԸ հայրապետացն: Եւ ջանացէ՛ք, որ զբանադրանքն չի ընդունիք, եւ զինչ որ գրած է զայն արէք:

Չայս գրոցս անունն անուանեցաք Օգուտ բժշկութեան, որ տաճիկն քիֆայէթի ի տիպ ասէ: Եւ արարի զայս գիրքս երկու բաժին. եւ առաջի բաժինն է ուսումն բժշկութեան եւ թպտիր առողջութեան եւ ստածումն ամէն անձինն, եւ Բ բաժինն յիշէ զկերակուրն եւ զդեղերն նորա, որ ի Ա ի Ա են խառնուած, եւ զբնութիւն եւ զօգտութիւն եւ զօրութիւնն եւ զչափն առնելուն եւ զփոխան ամէն մեկին: Համառօտ ժողովեցի եւ գրեցի զհին եւ զնոր բժշկապետացն զխօսքն, որ զամէն մեկին անունն ի յիր տեղն պիտի յիշենք: Եւ արարաք զայս ի վերայ այբուբենի կարգաւ:

Եւ յառաջն ի վերն ցաւուն անունն է գրած եւ ի ներքեւն զցաւուն պատճառն է գրած եւ զնշանն, եւ ի ներքեւն զստածումն է գրած, եւ ի մէկ երեսն զտաքէ եղածն է գրած

եւ ի մէկայլ երեսն գպաղէ եղածն է գրած, որ կարդացողին հեշտ լինայ:

Եւ գԳեղիանոսի գխօսքն է ընտրած, որ ասցել է, թէ բժշկին քան գԳ իրքն անցել այլ ճար չկայ. յառաջն որ գիտենայ գպատճառն, թէ ի՛նչ պատճառէ է, եւ ի խառնուածո՞ց է, թէ յարենէ՞ է, թէ սաֆրայէ՞ է, թէ պալղամէ, թէ սավտայէ. եւ ո՞ր անդամն է ժողվել եւ ի՞նչ պատճառ է որ ժողվել է, եւ Բ՝ գիտենայ գնշանն հիւանդութեան, եւ գպատճառն ցաւուն հասկանայ, որ ստածումն իրենն հեշտ լինայ, եւ Գ՝ որ ստածումն եւ թպտիր ստածման այն իրօքն, որ հիւանդութիւնն այնով փարատի, եւ բնութիւնն զօրանայ եւ առողջութիւնն ի տեղն գայ, եւ Դ՝ այն է, որ զինչ բժիշկն ասէ՝ նա հիւանդն գամէնն կատարէ անպակաս: Եւ շատ հիւանդութիւն կայ, որ ի յայս Բ իրաց ի գատ չէ, կա՛մ ի տաքէ կամ ի հովէ է. բայց Բ բաժանեցաք գտփերն, վասն տաքութեան եւ հովութեան. եւ պատճառ հովութեան եւ նշան, եւ պատճառ տաքութեան եւ նշան, եւ գամէնն Ա տուփ մն են արել, ստածումն այլ տուփ մն են արել: Եւ յառաջն զցաւուն անունն եւ յետեւ գպատճառն եւ գնշանն, եւ այլ ի վայր ստածումն. զբժշկապետաց խօսվին այլ յիշեմ, թէ մէկին որ վարդապետի մն խօսքն բարի խրատ լինի, մէկայլ վարդապետին խօսքն դիրաւ հասկանայ եւ հակառակ չգայ եւ խնդրուածքն կատարի աստուծով. ամէն:

Եւ գամէն իրք պիտի որ յայս գիրքս գիտենան. եւ պատճառն այս ասփերուս այն է, որ դուն գպատճառն եւ գնշանն եւ գստածումն, որ ի տաքութենէ լինի եւ կամ ի

հովութենէ, եւ կամ Ա հիւանդութիւն գտնուս ի յերկու տուփն եւ գերկու բժշկին զխօսքն գրես, ի Ա ցան ի Ա թղթին երեսն: Եւ այս գրքիս ձեւն խիստ աղէկ եւ հաւնելու է, եւ կարդացողին դժար եւ ծածուկ չի լինիր. եւ յորժամ աղէկ միտք դնես՝ նա իմանաս զխօսացն զհամն, եւ իմանաս զպատճառն եւ գնշանն գտարութեան եւ զհովութեան, զստածումն թէ ո՛րպէս է հրամայած: Եւ այս ուսումն այնոր համար փառաւոր եւ պատուական է: Բայց թէ չի ճանաչէ զպատճառն եւ գնշանն, թէ ուստի՛ իցէ, կամ ի յարենէ եւ կամ ի սաֆրայէ կամ ի պալղամէ կամ ի սաւտայէ է. եւ զայս ամէնն պիտի որ աղվոր իմանաս որ ստածելն քեզ հեշտութեամբ լինայ:

Եւ ցանկս գրոցն՝ յառաջն համարձակ է թվով, եւ երկրորդն շինած է ի վերայ այբութենին, եւ այն Ա Ա դեղերուն զօրութիւնն է. եւ այն որ խառնուած թարքիպնուն զօրութիւնն է՝ այն այլ ի վերայ այբութենի է: Եւ թէ քեզ պիտենայ, որ գտնուս զաւշինդրն, կամ զանիտոնն, կամ զանուխն՝ դու տե՛ս ի վերայ այբին. եւ թէ ուզենաս որ գտնուս զբրինձն, զբակլան, զբացվենեկն՝ դու տե՛ս ի վերայ բենին. եւ թէ ուզենաս որ գտնուս զգարին, զգառն, զգաբժիլն՝ նա դու տե՛ս ի վերայ գիմին. եւ այսպէս գտի՛ր կարգաւ մինչեւ ի քէն: Եւ զխառնուած դեղերն այլ այսպէս գտիր, որպէս ասան ասիան եւ ապքաման եւ աստաքի սալիմն եւ ինչ նման սոցա՝ ի վերայ այբին տես, եւ զմաճումն ի վերայ մենին տես, եւ զճուարիշն ի վերայ ճէին տես, եւ զշարապն ի վերայ շային տես, եւ զտլէն ի վերայ տիւնին տես, եւ դուրսն ի վերայ դատին տես. եւ այսպէս գնա՛ կարգաւ մինչեւ վիճարն ի գրոցն. եւ ի գրոցն

վիճարքն գփոխանն է գրած. եւ այլ յետեւ գխրատն է գրած
գԳեղիանոսի եւ գԲագարատայ. եւ այլ ի վերջն քիչ մն բան
առաք ի Չախիբայ Խորոզմի շահէն եւ որպէս գէտ ստածումն
է Ա Ա դեղերու գորութիւնէ:

Եւ այլ իմացի՛ր, եղբայր, որ գիրքս մեր խօսքն չէ. առաջի
իմաստասիրացն եւ բժշկական իմաստասիրացն եւ վերջին
փիլիսոփայիցն եւ այս ամէն բժշկացն խօսքն է, որ է
Բագարատն, եւ Գեղիանոսն, եւ Արճիճանիսն, եւ Ֆլուսն, եւ
Արպիասօսն, եւ Ռոֆոսն, եւ Դէվճանիսն, եւ Մասրճուէն, եւ
Յետուն, եւ Մասովային որդին, եւ Ապուճարեհն, եւ Մասեհն,
եւ Մահամատ Չաքարիային որդին, եւ Մապիթ Կուռանն,
եւ շունան, եւ Իսաղն, եւ Սինային որդին, եւ Դիատօղն եւ
Եհաննան եւ այլ բազում ժողովուրդ, որ ի յայս արուեստս
շատ աշխատել են: Մենք սոցա գգիրքն ընտրել ենք եւ գրել
շատ աշխատանօք եւ այսմն հետէ գրեցի շատ աշխատանօք
գայս ձեռամբ իմով:

Եւ շատ դժարութիւն եւ պատահմունք են քաշել ի
յանօրինաց, ի յայլագգացն, ի դատատրաց, ի թագատրաց
եւ իշխանաց. եւ շատ գրեանք էի ժողովել ի յԱրապոց եւ
ի Պարսից եւ ի Թուրքաց. եւ շատ դարիպութիւն էի քաշել.
եւ գժամանակին գշարն եւ զբարին եւ զպատահմունքն էի
կրել, զհարստութիւն եւ զաղքատութիւն էի քաշել. եւ ի
յերկրէ ի յերկիր շատ բժշկութեան զարուեստն էի գործել,
եւ փորձել էի ես իմ միտքն շատ դեղեր եւ թարքիպնի, եւ
շատ ծառայել էի հիւանդաց, եւ մեծամեծացն եւ իշխանաց,
եւ հագարապետաց, եւ հարիւրապետաց, եւ քաղաքացոց, եւ

աղքատաց, մեծի եւ փոքու, եւ շատ չար եւ բարի էի տեսել. եւ հանց եղայ ես հիմայ, որ ո՛չ հարստութեան կու խնդամ, եւ ոչ աղքատութեան կու տրտմիմ, եւ զամէն շարն ու զբարին մէկ կու տեսնում, եւ անհոգել եմ այս ամէն ցանկութենէն կենցաղոյս եւ յուսամ ի տէր Աստուած մեր Յիսուս Քրիստոս որդին միածին եւ երկոտասան առաքեալքն եւ սուրբ Գրիգոր լուսաւորիչն Հայաստանեաց, եւ ՅԺԸ հայրապետն. եւ արարիչ տէր Աստուածն արքայութիւն պատրաստէ ձեզ եւ մեր ծնօղացն, եւ անարժան եւ անպիտան ծառայիս Աստուծոյ Ամիրտովլաթ բժշկին. եւ տէր Աստուած ձեզ արքայութիւն տացէ. ամէն:

Թարգմանեցաւ պատուական բժշկարանս ի մայրաքաղաքն ի Ըռումիայ, որ թարգմանի Ֆիլիպիայ, ի թվականիս հայոց ՉԺԸ ամին, ի դեկտեմբերի ԻԵ, որ ծնունդ էր փրկչին այլ ազգաց հաշուովն, ի կաթողիկոսութեան տէր Ըռըստակիսի, եւ եպիսկոպոսութեան տէր Յովակիմին: Որք կարդայք կամ օրինակէք՝ թողութիւն մեղաց խնդրեցէք ի Քրիստոսէ թարգմանողի գրոցս Ամիրտովլաթ բժշկին, եւ Աստուած զձեզ յիշէ իւր միսանգամ գալուստն. ամէն:

Այլ եւ զվերջին զաշխատողն սորա զՊունիաթ Սեբաստացին, որ բազում աշխատանք կրեցաք ի յայս արուեստս, եւ բազում բժշկութիւն կատարեցաւ շնորհին աստուծոյ, եւ այս պատուական գրոցս խիստ հաւանեցաք եւ գրել տվաք ձեռամբ Կարապետ մանկանն ի թվականութեանս հայոց ՌՉԵ ամին, եւ քաղաքն ի Մարգուան: Յառաջն բնակեալ էաք ի Սամիսոն, եւ շատ

գրեանք էաք ժողվել ի Հայոց եւ ի յայլ ազգաց. եւ յետոյ ազգն Ուռուսաց գօրացան եւ զՍեւ ծովուն եզերն աւիրեցին. եւ եկեալ ի Սամիսոն՝ գիշերով ասպատակեցին եւ զմեզ փախստական արարին, եւ զքաղաքն այրեցին, եւ զինչ գրեանք ունէաք՝ հրակէզ արարին. եւ մեք եկեալ փախստական ի Մարգուան՝ եւ զայս գիրքս գրել տվաք ողորմութեամբն աստուծոյ:

Աղաչեմ ձեզ, հայրք եւ եղբայրք, որ հանդիպիք սմա՝ կարդալով կամ տեսանելով՝ յոյժ խնամք տանիք սմա, զի յոյժ պատուական եւ գովելի է սա. եւ որ սիրով աշխատի այս արհեստս՝ բազում օգտութիւն գտանէ եւ բազում հարկիս կու ընդունի ի մարդկանէ եւ ի մեծամեծաց եւ ըռամկաց. եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն:

Սիրաք իմաստասէրն հրամայէ, թէ մի՛ ազահիր դու ամէն փափկութեանս քո, եւ մի՛ շռայլիր ի պէսպէս խորտիկս: Ջի ի բազում խորտկաց ծնանին ցաւք: Յազահութենէ բազումք մեռան. իսկ որ զգուշ լինի անձին իւրոյ՝ յաւելու ի կեանս իւր: Պատուեա՛ զբժիշկք ի պէտս քո, զի եւ սա Աստուծոյ արարեալ է. բայց բժշկութիւն ի բարձրելոյն է, եւ ժամանակ, զի ի ձեռն նոցա է բժշկութիւն քեզ. զի եւ նոքա գտէր աղաչեսցեն, զի աջողեսցի գործ նոցա:

Խօսք վարդապետաց՝ որ ասացեր են աշակերտաց, որ կու ուսանին:

Ասէ Բուկրատ եւ Գեղիանոս, թէ ով որ ուզէ կատարեալ բժիշկ լինի եւ հիւանդի պէտ առնէ՝ պարտ է որ յառաջն աշակերտէ, ապա վարդապետ կու լինի. գաղէկն եւ զվատն

գիտենայ եւ ուսանի, թէ ո՛րպէս պէտ կառնեն, եւ ապա նորա հեշտ կու լինի: Եւ այլ ով որ ուզէ որ կատարեալ հեքիմ լինի՝ յառաջն կու պիտի որ գղեղերուն կերպն ճանաչէ, եւ ապա զբնութիւնն իմանայ, զերակն եւ զդարձուրան ճանաչէ, եւ այլ նշաննի, որ ի հիւանդն երեւանայ, եւ գղեղերուն շինելն ի վարպետէ տեսնու եւ ինքն այլ թարճիպա ունենայ, եւ զամէն դեղ յիր տեղն տայ, որ զէն չառնէ, եւ զինչ որ առնէ՝ ձրի չայնէ, որ մարդկանց վնաս չի գործէ:

Եւ բժիշկն խելօք եւ հարկետր եւ հնագանդ եւ խրատատու պիտի, եւ արբեցող, ազահ եւ տամահի չի պիտի: Աղքատասէր եւ ողորմած, հաւատարիմ եւ աստուածապաշտ եւ սուրբ մարդ պիտի: Եւ թէ զհիւանդին ցաւն չիմանայ՝ նա դեղ չառնէ, որ զիր անունն չի կոտորէ: Եւ թէ յիմար լինի՝ նա լաւն այն է, որ չի տանին առ հիւանդն, եւ ոչ զնա բժիշկ համարին:

Եւ այլ զհտացիր, որ Ե իրք պէտք է բժշկին. Ա, որ իմանայ զօդն քաղաքաց, Բ, որ իմանայ զեղանակն, Գ, որ իմանայ հիւանդին զմահն եւ զկեանքն, Դ, որ իմանայ հիւանդութեան պատճառն եւ զբնութիւն հիւանդին, Ե, որ իմանայ զդեղին բնութիւնն եւ զօրութիւնն: Եւ թէ զայսոք իմանայ եւ ի միտ առնէ՝ բժիշկ է կատարեալ, եւ թէ չէ՝ նա չէ բժիշկ եւ իմաստուն, եւ ոչ ունի մասն բժշկութեան: Որպէս հրամայէ Ամիրտովլաթ բժիշկն, թէ՛

Եղի՛ր հետետղ իմաստութեան հետ.

Եթէ չուսանիս՝ բժիշկ ես անգետ:

Լինիս դու իմաստուն՝ արա՛ բանիս պէտ:

Գրոցս անունն է անգէտի անպէտ:

Եւ գոր օրինակ հողմն որ ի հիւսիսոյ շնչէ, գօղն լնու ջրով,
– վասն զի հիւսիսոյ կողմն խաւարային է եւ գիջային, զի
ոչ լոյս եւ ոչ ջերմութիւն արեգական հասանի անդ, եւ որք
անտի շնչեն օդք՝ լի են խոնաւութեամբ, զամպսն լնուն ջրով,
– սոյնպէս տրտմութիւնք լի են ջրով եւ մթացուցիչք խաւարով
եւ լնուն զաչքս արտասուօք: Եւ գոր օրինակ հարաւային
հողմն լի է լուսով եւ ջերմութեամբ, եւ հողմն որ անտի
շնչէ՝ պարզէ գօղն եւ ցամաքեցուցանէ եւ լուսաւոր գործէ,
– սոյնպէս եւ խնդութիւն զամպ տրտմութեան փարատէ ի
հոգոյն եւ լուսաւոր խնդութեամբ զհոգիս լնու: Իսկ զհոգի
մարդկան կապեալ լինի, շունչ ի մէջ կալով հոգոյն եւ
մարմնոյն, եւ նա է կապ հոգոյն: Եւ հոգին կապեալ է ի շունչն,
եւ սակաւ ինչ թանձրագոյն քան զանօսութիւն հոգոյն: Եւ
շունչն կապեալ է ընդ երակն եւ ընդ արիւնն. իսկ արիւնն
կապեալ է ընդ մարմնոյն, եւ յայտ անտի է, յորժամ կամի որ
հեշտ սպանանել զմարդ՝ զերակն արձակէ, եւ ի պակասել
արեանն՝ ընդ նմին եւ շունչն պակասի: Յայնժամ հոգին,
իբրեւ ի կապանաց արձակեալ, հեշտ ելեալ գնայ ի մարդոյն:
Վասն այնորիկ անախտ եւ անմարմին հոգին ընդ մարմնոյ
ախտս հեշտանայ, զի ընդ շնչոյն կապեալ է, եւ շունչն ընդ
մարմնոյն, եւ հոգին ի ձեռն մարմնոյն եւ շնչոյն ընդ մարմնոյն
ցանկութիւնսն հեշտացեալ ախտանայ, եւ որպէս զցաւսն եւ
զհիւանդութիւնսն մարմնոյ զգայ ի ձեռն շնչոյն, եւ զկարիս

քաղցոյ եւ ծարաւոյ եւ զցաւս հարուածոց կրէ, թէպէտ
ինքն անկարիս է եւ անմարմին. այսպէս ի ցանկութիւն եւ
հեշտութիւն մարմնոյն: Բայց որ գոյացոյց զհոգին եւ ստեղծ
զմարմինն եւ միաւորեաց զոսսա՝ զբովանդակ ինքն գիտէ. եւ
նմա փառք յաիտեանս. ամէն:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ ՈՒՍՈՒՄՆ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

Ա

ԱՌԱՋՆ ՈՒՍԱՆԻԼ ՉԲԺՇԿՈՒԹԵԱՆ ՉՉԱՔՆ ԵՒ ԽԱՓԱՆԵԼ ՉՄԱՀԱՑՈՒ ԴԵՂՈՑՆ ՉՕՐՈՒԹԻՒՆՆ

Եւ այլ իմացի՛ք, որ գայս բժշկութիւնս պատեհ է որ սմէն մարդ ուսանի, զի այն պատճառին համար որ քան գայս փառաւոր ուսումն չկայ, որ հանապազ մարդուն գառողջութիւնն կուզէ, եւ տէր Աստուած քան զմարդն փառաւոր ու պատուական իրք չէ ստեղծեր: Եւ գրած է ի Հին Կտակարանքն, թէ Մովսէս հիւանդացաւ, եւ եկին նորա սիրելիքն եւ ասացին, թէ դեղ արա քեզ. եւ նա ասաց, թէ ով ինձ գայս հիւանդութիւնս երեսո՛ւնա գդեղն եւ գստածումն այլ ինքն տայ. եւ ձայն եղեւ ի վերուստ, թէ դեղ արա քեզ, զի դեղն այլ ես եմ ստեղծել եւ ստածումն այլ իմ հրամանաւն է. եւ դեղ արա քեզ, եւ ես տամ գառողջութիւն: Ամէն դեղոց եւ ցաւոց

տվողն Աստուած է, եւ ամէն ցաւու Աստուած դեղ է ստեղծել, գարդ գմահն՝ որ ճար չկայ: Այլ ասացեր են բժշկապետքն, թէ բժշկութեան արուեստքն օգուտ է անձինն, որպէս աղօթքն եւ ողորմութիւնն օգտէ հոգոյն. եւ այլ պատեհ այն է, որ յառաջն մարդուն անձն առողջ լինի եւ ապա աղօթէ առ Աստուած. եւ որ չի լինի առողջ մարմնով՝ ոչ կարէ ծառայել Աստուծոյ հոգով. եւ այս պատճառովս այս բժշկութեան արուեստս պատուական եւ փառաւոր եղաւ:

Եւ գիտացի՛ր, որ յառաջն այս ուսումն ի Հելլենացոց ելաւ. եւ յետոյ ուսան ի նոցանէ Հնդիկքն. եւ յետ այնոր ուսան Հռոմաց իմաստասէրքն: Եւ ի Հնդկաց մէջն այս ուսումն քիչ էր եւ նուագ եւ վատուժ. եւ շատ չարչարանօք կու ուսանէին. եւ բայց Հռոմաց իմաստասէրքն հեշտ արարին եւ աղէկ ուսան եւ ուսուցին ամէն ազգին, եւ նոցա բնութիւնն աղէկ եւ նմանութիւն էր այս արուեստիս, եւ աղէկ կարդային եւ կատարէին:

Եւ թագաւորաց եւ մեծունաց պատեհ է, որ իմաստուն եւ ճարտար արուեստաւոր բժիշկ մն ի մօտն պահէ, այնոր համար որ յորժամ պիտենայ՝ տեղաց մն այլ չի փնտռեն, կամ այլ յերկրէ բերեն, եւ հանապագ մարդն առողջ չի կենար:

Եւ դարձեալ ասացին իմաստասէրքն, թէ թագաւորաց սահմանքն է, որ գօրք կովուն ժողվեն եւ տուն շինեն եւ ի մէջն դնեն զսլեհնին եւ պահեն այն ատուրն համարն, որ թէ չարկամն յայտնի ի դիհաց մն՝ նա բանան զայն տունն, որ սլեհն կայ ի ներս, եւ հանեն զսլեհն եւ բաժանեն գօրացն եւ հեծելին: Թէ չարկամ չի կենայ՝ այն սլեհն ի յայն տունն մնայ,

Եւ ի ժիր գայն պեհնին աշել կու պիտի եւ պահել ատուր մն պիտեան:

Եւ հաքիմն այլ կու պիտի որ ուսումն եւ իմաստութիւն ունենայ եւ ճարտար լինենայ ի յիր արուեստն, եւ դուլ եւ վատուժ եւ նենգաւոր եւ ռխասիրտ չի լինայ. շատ գրեանք լինի տեսնել եւ ի վարպետէ կարդացել, եւ իր մտացն շատ ստածումն լինի փորձել, եւ բարեմիտ եւ խրատատու լինայ. եւ կծնի եւ գողի եւ գանձաւեր եւ տամահի չի լինի, եւ աղքատաց իրք չի քննէ եւ Աստուծոյ սիրուն համար դեղ առնէ: Եւ թէ այսպէս որ գրեցի չի լինի եւ հակառակն լինի՝ լան այն է, որ գայնպիսի բժիշկն չի տանին առ հիւանդն եւ դեղ չառնէ հիւանդին: Այն պատճառին համար, որ մարդն որպէս քաղաք մն է, եւ բնութիւնն թագաւոր է քաղաքին, եւ ցաւն հիւանդին որպէս չարկամն է քաղաքին եւ ի ժիր կուզէ զքաղաքն աւիրէ. զի դեղերուն բնութիւնն զետ պեհ է, որ կովուն ժամն հաքիմն որպէս պեհտար է: Բայց կու պիտի որ աղէկ, ճարտար եւ սիկ լինայ եւ գիտուն, եւ զատենն աշէ. որ ժամ թագաւորին կովու ժամն ի՞նչ կու պիտի՝ իմանայ. եւ թէ չարկամն թագաւորէն հեռի լինի, եւ թագաւորն պեհ ուզէ՝ պատեհ է որ սլեհտարն նետ եւ աղեղն տայ. թէ չարկամն այլի մօտի գայ՝ ըռումբ տայ. թէ հանց որ ի թագաւորն կցի՝ նա թուր տայ: Թէ այսպէս չայնէ պեհտարն, զհակառակն այնէ՝ եւ թպտիր կովուն աւիրի եւ չարկամն յաղթէ զթագաւորն եւ զօրանայ: Եւ բժիշկն այլ այսպէս պատեհ է որ զամէն իրք յատենն տայ եւ իմաստութեամբ առնէ եւ ճարտարութեամբ, եւ զամէն իրաց զատենն տեսնու եւ այնէ. հանց որ մէկի մն որ

լուծման դեղ պատեհ լինայ՝ նա վերաբերութեան դեղ չտայ, եւ յորժամ գարեջուր պատեհ լինի՝ մուգաւարայ չիտայ, եւ գինջ որ հիւանդին տալու է՝ ատենն տայ եւ ի վերայ ուժին եւ ի վերայ հիւանդին տայ. եւ թէ հանց որ հակառակն այն՝ աւիրէ գթպտիրն եւ գբնութիւնն, զգամ ամելցնէ, եւ հիւանդին մեռնելուն թպտիրն ի բժշկին անգիտութենէն լինայ:

Բայց բժիշկն կու պիտի որ գիտուն եւ իմաստուն եւ հանց որ թագաւորն գնորա խօսքն ընդունի. եւ յորժամ թագաւորն կերակուր ուտէ՝ նա բժիշկն խէչն լինայ եւ աշէ ի կերակուրն եւ նստի ի մօտն. թէ կերակուրն վնասակար եւ զենարար իրք լինի, որ անկից զէն հասնի թագաւորին՝ նա չի թողու որ ուտէ, այնոր համար որ թագաւորաց եւ մեծունաց շարկամն շատ է: Եւ այն կերակուրն, որ մահացու դեղ կայ՝ նշան ունի եւ երեւումն: Հանց որ ի բրինձն կենայ մահացու դեղ՝ նա ի վրան զէտ դեղին ջուր գայ. եւ թէ ի գինին լինի՝ նա ի մարդուն աշքն զէտ արիւն երեւնայ կամ զէտ արեան ջուր եւ սեւ սեւ ծներ երեւայ: Եւ թէ ի վարդն լինի՝ նա տերեւնին թոռնի եւ ճղքտած երեւնայ. թէ մահացու դեղն ի կապան եւ ի հալան լինի օժած՝ նա կապան մթնգուն երեւնայ եւ պեղծ երեւնայ աշիչն մարդուն, եւ թէ կապան սեւ լինի՝ զան մարդ դժուարութեամբ ճանաչէ: Եւ ամէն մահացու դեղոց դեղ մն այլ կայ որ փարատէ զդեղն մահացու, եւ զանունն եւ զպատճառն եւ զնշանն կամին յիշել, թէ Աստուած կամի, ի յայս գրքին վերջքն Աստուծոյ զօրութեամբն:

Եւ այլ հանց կու պիտի, որ թագաւորն զբժիշկն հարկետր եւ պատուական տեսնու Գ իրաց վերայ. նախ եւ առաջինն՝ որ

Է ի վերայ առողջութեանն եւ կենդանութեանն. եւ Բ ի վերայ ըրգակի, եւ Գ ի վերայ տանն եւ ընտանեաց. եւ այլ մարդիկ գայս փառս չունին որ բժիշկն ունի: Առաջի կենդանութիւնն այն է, որ իրք մն շինէ բժիշկն, որ հիւանդին սիրտն չուզենայ, բայց կենդանութեան համար ուտէ եւ համի գբժշկին շինածն: Եւ ի ըրգակն այն է, որ հրամայէ, թէ այսպիսի իրք առնուլ կու պիտի. եւ թէ քանի կծնի է թէ գողի է թագաւորն՝ նա առնու վասն առողջութեան պատճառին համար. եւ յորժամ ողջանայ՝ խնդութիւն եւ ուրախութիւն լինի: Եւ այն որ ի վերայ գաւակաց եւ ընտանեաց իշխանութիւն ունի՝ միամտութեամբ մտէ եւ տեսնու, եւ կաշի ի ձեռվին եւ տեսնու գերակն, եւ թէ ի յանդամոցն թէ ի ծածուկ տեղացն ցաւ կայ՝ բանայ եւ տեսնու բժիշկն եւ գամէն ծածուկ խորհուրդն նորա ասեն: Եւ պատեհ է որ բժիշկն գէտ խոստովանահայր լինի եւ գամէն ծածուկ խորհուրդն պահէ: Թէ բժիշկն այսպէս չի լինի՝ ինքն չէ բժիշկ: Եւ պատեհ է բժշկին, որ հարկետր եւ ծանրագլուխ լինի, եւ ձեռքն ի շնահաւոր եւ ոտքն թեթեւ լինի եւ ուսման տէր. եւ զինչ որ հիւանդին տայ՝ նա ամէնն օգուտ լինայ: Եւ թէ բժիշկն ծանր-ձեռք լինայ եւ ոտքն ի շնահաւոր չի լինի՝ որքան որ ուսումն ունենայ, զինչ որ հիւանդին տայ՝ նա ամէնն օգուտ չի լինի: Եւ գայն Աստուած գիտէ:

Բ

Գիտցի՛ր, որ շատոք կան, որ գանուն բժշկութեան յանձն են առել եւ զինքն բժիշկ է անուանել. թէ հարցանես թէ ի՞նչ է բժշկութիւն՝ եւ չի գիտէ զինչ գործէ եւ ոչ կարէ պատասխանի տալ. զի այնոր համար որ ի վարպետէ չէ կարդացել, եւ թէ կարդացել է՝ նա չէ հասկցեր եւ կամ մոռացել է: Եւ անգիտութիւն է, որ այսպիսուն մարդ իրք ունին եւ կամ հարցանեն եւ զբանին գառաջքն եւ զվերջքն, զի չի գիտէ զինչ գործէ: Եւ խելաց ճանապարհն եւ գիտութիւնն այսպէս պիտի, որ զայս արուեստիս զձեւն զամէնն ունի զգործն եւ հասկնայ: Եւ իմաստնոյ այսչափ խրատս հերիք է ուննողին:

Եւ այս արուեստիս սկիզբն առնենք եւ ասենք զինչ պիտեւան է մեզ համառօտ: Եւ այս բժշկութեանս չափ այս մեր վարդապետացն խօսքն հակառակ է ասցած եւ ասէ-

Դէվճանիսն ասէ, թէ բժշկութիւնն արուեստ մն է, որ զկենդանութիւնն առողջ կու պահէ, եւ զհիւանդն ստածէ եւ առողջ առնէ, թէ Աստուած կամի զայն՝ որ առողջ լինալոց է:

Ֆալօսն ասէ, թէ երկու իրք է, մէկն ուսումն է եւ մէկն գործելն է. եւ գործելն այլ Բ ցեղ է. յառաջն այն է, որ զառողջութեան թպտիրն այնել, եւ Բ այն է, որ ստածեն եւ բժշկեն զհիւանդն, եւ Գ ձեռաց գործն է, որ կամ ի միսն, կամ ի կաշին է, եւ կամ ի ոսկորն է մարդուն, որպէս կոտրելն եւ կարելն եւ խարելն: Որոյ ոսկորն կոտրի՝ եւ կապեն, եւ որ ի տեղացն ելնէ՝ ի տեղն ձգեն. եւ գործն այլ Գ բաժին է, եւ

յառաջ բնութեան ուսումն, եւ այն ալ Բ բաժին է:

Բայց հիմայ յիշեմ բնութեան ուսումն այլ. Չ բաժին է. յառաջն այն է, որ գիտենայ գրո հիմն, որ է ըստուգասաթն, որ է հողն եւ ջուրն եւ քամին եւ կրակն. եւ Բ, որ յիշէ գասոց խառնվիլն յիրար, որ միգաճ ասեն, եւ Գ, որ յիշէ զխառնուածն, որ է սաֆրան եւ արիւնն եւ պալղամն եւ սավտան, եւ Դ, որ յիշէ գմարդակագմութիւն ամէն անդամացն եւ գամէն մէկի ուժն գատ ի գատ, եւ Ե, որ յիշէ գորութիւնքն, որ է բնութեան ուժն եւ կենդանութեան ուժն եւ իմաստութեան ուժն, եւ Չ, որ յիշէ զգործն այս ուժերու:

Բայց ի յայս արուեստիս ի մէջն վարպետաք են եկեր եւ հինգ բաժան արել: Յառաջն դեղերուն ճանաչելն, որ բժիշկն ի գործ կու արկանէ ամէն հիւանդութեան ի դուսէն, որպէս տիմէտնի եւ նուտուլնի եւ տլէնի եւ որ նման է սոցա. եւ երկրորդ՝ որպէս ձեռաց գործն – կտրելն եւ կարելն եւ ճղքելն եւ խարելն եւ երակ առնելն եւ ապիկիս արկանելն եւ որ նման է սոցա, որ պիտի յիշվի. եւ երրորդ՝ թպտիրն կերակրոց եւ ընպելեաց, որ զբնութիւնն ըղորդէ մարդուն, որ առողջութիւնն առողջ լինի. եւ չորրորդ՝ որ ստաժէ դեղերով, որ վերաբերութիւն այնէ եւ լուծումն այնէ եւ կամ զլուծեալն կապէ կամ զանձն տաքցնէ կամ հովցնէ, կամ գիճացնէ եւ կամ չորացնէ, եւ հինգերորդն այն է, որ բժիշկն ճանաչէ եւ իմանայ զհիւանդին ցաւն, որ ստաժումն հեշտ լինայ: Եւ գամէն մէկ ի յիր տեղն յիշեմ, թէ Աստուած կամի:

Եւ չաքն ըստուղուսաթին: Գիտացի՛ր, որ ի յայս ըստուղուսաթին չաքին բժշկապետքն շատ խօսք են ասացեր

մէկ մէկին հակառակ:

Բայց Ընուֆօսն եւ Անտարիմախոսն եւ Էհանան ասել են, թէ ըստողութեան այն է, որ ամէն գործոց հիմն է. եւ ինքն գործէ զամէն գործ:

Եւ Գեղիանոս եւ այլոց բժշկապետքն ասացին, թէ ըստողութեան այն է, որ ամէն իրք յառաջն ի յիրմէն լինայ եւ յետեւ ի յինքն դառնայ:

Բագարատն եւ Մահամատ Չաքարիային որդին եւ Մինային որդին ասեն, թէ ըստողութեան հիմն եւ սերմն է ամէն արարածոց, եւ ինքն կրակն է, եւ հողմն է, եւ ջուրն է, եւ հողն է, եւ ամէն իրք ի դոցին խառնելուն կու գոյանան՝ ուժովն եւ գործովն եւ զօրութեամբն: Եւ այս չորսին Բ թեթեւ է եւ Բ ծանր է. կրակն եւ քամին թեթեւ է. եւ ջուրն եւ հողն ծանր է. եւ հողն ի յամէնուն մէջ տեղն որպէս կէտ ի մէջ բոլորի է, եւ ջուրն պատել է զհողն, եւ քամին պատել է զջուրն, եւ կրակն պատել է զքամին: Եւ այս ամէնն Աստուծոյ զօրութեամբն է յօրինած:

Եւ ի վերայ այսոր խօսքն է ասացած, թէ զինչ ի յաշխարհս արարիչն Աստուած ստեղծել է՝ երեք իրք է. եւ ի յայս իրեք իրացս ի զատ այլ իրք չի կայ, – կա՛ւմ կենդանի է, որ է ամէն կենդանի, եւ կամ բուսունք է, եւ կամ այն է՝ որ քարանց ելանէ: Եւ զայս ամէնն երեւելի տեսանենք, որ բոյսն ի գետնէն ելանէ ջրով, եւ օդն եւ տաքութիւնն ի յինքն տպաւորի արեգականն, որպէս որ մէկ մի հունդ ցանէ ի գետինն եւ ջրէ զինքն, թէ օդն եւ արեգակն ի յինքն չի հասնի՝ եւ չի բուսանիլ, եւ թէ բուսնի՝ չի կատարեալ բուսնի. եւ այնոր համար որ ամենուն հիմն այս

չորս նիւթն է հրամանաւն Աստուծոյ եւ անեղին եւ անմահին ամէն:

Բայց կենդանին զուժն եւ զօրութիւնն ի կերակրոց կու առնէ. եւ կերակուրն ի բուսոց լինի. եւ բուսն ի նիւթոյ գոյանայ եւ սնանի, ի յարեգակնէն եւ ի գիճութենէն եփի եւ հասնի կատարեալ: Եւ այն տեղն որ արեգակ չի ցաթէ՝ իսկի բոյս եւ անասուն եւ կենդանի չի լինի. եւ իմացվաւ որ ամէն գոյութեան պատճառն ի յայս չորս նիւթէն, եւ իրեանց խառնվիլն արարչին հրամանաւն է: Ամէն մէկին խառնվիլն մէկ մէկի հակառակ է ստեղծել արարիչն Աստուած իր կարող զօրութեամբն, եւ անունն արարածքն է անուանել: Եւ փառք արարչին եւ անմահին աստուծոյ, որ է օրինեալ անգրաւ յաիտեանս. ամէն:

Իմացի՛ր, որ բնութիւնն չորսն մէկ մէկ է, եւ չորսն խառնած է. եւ յառաջն տաք է, եւ երկուսն հոլ է, եւ երեքն գէճ, եւ չորսն չոր. եւ չորսն այլ որ խառնուած են՝ առաջինն տաք է եւ գէճ, եւ երկուքն տաք է եւ չոր, եւ երեքն հոլ է եւ գէճ, եւ չորսն հոլ է եւ չոր. եւ ինն այն է, որ մտիթատիլ է ընդ տաքութիւնն եւ ընդ հոլութիւնն եւ ընդ գիճութիւնն եւ ընդ չորութիւնն. եւ այս մտիթատիլն է հիմն ամէն կենդանութեան եւ այսոր պատճառն այլ նիւթին խառնուածէն լինի ուժովն եւ զօրութեամբն. այս խառնվելուն պատճառն երկուք է. մէկն ըղորդ եւ մէկն հակառակ է:

Բայց այն խառնվիլն որ ըղորդ է՝ այն է որ ի մարմինն այս Գ նիւթին բաժինքն իրար խառնին ըղորդ, որ հանց որ մէկ մէկն աւելի եւ մէկն մոտիթատիլ լինի: Եւ այն խառնվածն որ հակառակ է՝ ի յայս Գ նիւթէն մէկ-մէկ աւելի լինի, որպէս ջուրն, եւ մէկն պակաս՝ ասեն, թէ այս բնութիւնն հոլ է. եւ թէ հողին բնութիւնն աւելի լինի՝ եւ ասեն, թէ բնութիւնն չոր է. եւ թէ կրակն եւ քամին եւ Բ այլ աւելի լինի՝ եւ ասեն, թէ այնոր բնութիւնն տաք եւ չոր է. եւ թէ հողն եւ ջուրն մէկ-մէկ բաժին աւելի լինի՝ եւ ասեն, թէ այնոր բնութիւնն հոլ է չոր է: Եւ այսպէս է բնութիւն մարդուն, որ մէկ մէկի հակառակի խառնուածոցն:

Եւ այլ օրինակ ցուցանենք քեզ, որ հեշտ հասկանաս եւ իմանաս, թէ որպէս է: Օրինակն այս է, որ թէ զնձուֆրն եւ

իսպիտակ դեղն եւ գթանաքն եւ գոնեխն յամենէն առնուս մէկ
մէկ մասն եւ զամէնն տրորես եւ յիրար խառնես՝ անպատճառ
որ գուն մն կու լինի՝ որ ի յայս գուներս չի նմանիր. եւ թէ
քիչ մն մէկէն աւելի լինի՝ նա հակառակ լինայ այն առաջին
գունին, եւ թէ պակսեցնես՝ նա այսպէս գուն փոխի: Եւ այլ
իմացի՛ր, որ այս՝ մոիթատիլ միզաճն է որ ասեն, զի այս
քանս մարդուն բնութիւնն է, եւ այլ կենդանոցն չէ: Բայց
այս մոիթատիլն որ կասենք ի մարդուն բնութիւնն՝ այս այլ
ճշմարիտ չէ. Բայց խելօք իմացան, որ քան զայլ կենդանուն՝
մարդուն բնութիւնն մոիթատիլ է, եւ քան զամէն անդամն
մարդուն՝ կաշին մոիթատիլ է, եւ քան զամէն կաշին՝ ձեռացն
կաշին աւելի մոիթատիլ է, եւ քան զձեռացն կաշին այլ
մոիթատիլ՝ մատն ծարերունն է, եւ քան զայս անցել այլ
մոիթատիլ չի կայ:

Գ

Գիտացի՛ր, որ այս խառնվածոցն բժշկապետքն ախլատ ասեն, եւ այսոնք Գ են – սաֆրան եւ արիւնն եւ պալղամն եւ սավտան: Եւ գիտացի՛ր, որ արեան բնութիւնն տաք է եւ գէճ, եւ իր ընծայման տեղն լերդն է եւ ունի զօղն: Եւ պալղամին բնութիւնն հով է եւ գէճ, եւ ունի զջրին բնութիւնն, եւ իւր տեղն յանձն է եւ թոքն է: Եւ սաֆրային բնութիւնն տաք եւ չոր է, ի կրակին բնութենէն. եւ իւր տեղն լեղին է: Եւ սաւտային բնութիւնն հով եւ չոր է, եւ ունի զհողին բնութիւնն, եւ իւր բնական տեղիքն փայծաղն է: Եւ այլ գիտացի՛ր, որ այս խառնուածն երկու կերպով է. եւ մէկն այն է, որ բնութեամբ են, եւ այն ի մարդուն անձն զօրութիւն ունի, եւ երկուքն՝ որ չէ զօրութեամբ եւ բնութեամբ, եւ այն չօգտէ անձինն: Եւ այն արիւնն որ բնութեամբ են՝ նշանն այն է, որ ի դվամն մուիթատիլ լինայ, եւ ի թանձրութիւն եւ ի նօրութիւն ոչ թանձր լինի եւ ոչ նօսր. եւ գունն ի խիստ կարմիր եւ համն քաղցր, եւ հոտած չի լինի. եւ յորժամ յանձնէն ելանէ՝ շուտ թանձրանայ: Եւ այսպէս արիւնն գուշակէ զառողջութիւնն եւ ուժովութիւնն, եւ զանձն աղէկ սնցնէ եւ զերեսին գունն կարմիր եւ պայծառ առնէ: Եւ այն արիւնն որ չէ բնութենով՝ Է ցեղ է. մէկն այն է, որ թանձր եւ մթնգուն լինի, եւ գուշակէ զլերդին տաքութիւնն եւ զչորութիւնն, եւ Բ՝ որ խիստ նօսր լինի. գուշակէ որ լերդին հովութիւն եւ չոր գիճութիւն կայ. Գ՝ որ ի սպիտակութիւն քշտէ. գուշակէ որ հովցել է լերդն եւ կալուած կայ. Դ՝ որ

գունն ի դեղնութիւն քշտէ, եւ համն այլ նոյնալէս եւ լեղութիւնն այլ. գուշակէ, որ սաֆրայ է դարձել, եւ Ե՝ որ հոտն հոտած լինի, գուշակէ որ արիւնն ի յանձն փտել է: Չ՝ որ համն աղի լինի. գուշակէ, որ աղի պալղամ է խառնել ի յինքն, Է՝ որ ի վրան փրփուր ունենայ. գուշակէ որ բնութիւնն գիճութիւն կայ եւ յանձն քամի կայ ցեղ ու ցեղ, հակառակօք:

Եւ պալղամն որ բնութեամբ լինի՝ նշանն այս է. – ի թանձրութիւնն եւ ի նօսրութիւն մոհթատիլ լինայ, բայց ինքն ի նմանութեամբ յայն կերակրէն է որ ի ստամոքն կիսայեփ լինի: Եւ թէ պալղամն այս կերպովս լինայ՝ նա զանդամքն եւ զոսկերքն կակոտղ կու պահէ, թէ շատ աշխատի՝ նա զէն չի առնէ. եւ յորժամ կերակուրն ի ժմէ անցնի եւ ի ստամոքն կերակուր չի կենայ՝ նա այս պալղամն զկերակրին տեղն կու բռնէ եւ զանձն կու կերակրէ. եւ ասկից յիստակ արիւն ընծայի այնոր համար, որ պալղամն կերակուր մն է անհալ:

Եւ պալղամն որ բնութեամբ չի լինի՝ Դ ցեղ է. յառաջն թթու է, եւ ինքն ի յայլ պագի պալղամնուն վրան հով է եւ չոր. գուշակէ որ չկարէ հալել զկերակուրն. նա ստամոքն պաղել է եւ միջի փորոքն պաղել է. եւ Բ ցեղ պալղամն աղի է եւ ինքն ի յայլ պագի պալղամնուն վրայ տաք եւ չոր է. գուշակէ հազ եւ ծարաւ եւ քերվիլ անձինն. եւ Գ ցեղ պալղամն այն է, որ ի տաքութիւնն եւ գիճութիւնն աւելի է քան զայլ պագի պալղամնին. գուշակէ որ արիւնն աւելի է եւ փորոքն տաքցել է. եւ Դ ցեղն զէտ հալած ապիկի է. ինքն հով է եւ թանձր է քան այլ պագի պալղամնին. գուշակէ որ ստամոքն հովցել է եւ ի փորոքն դուլինձ:

Եւ սաֆրան որ բնութենով լինի՝ նշանն այն է, որ լատիֆ լինի եւ կարմիր լինի եւ յիստակ եւ պայծառ, եւ համն լեղի լինայ. եւ սաֆրան որ այս կերպովս լինի՝ նա գտաւորքն տաքցնէ եւ գկերակորն հալէ եւ զաղիքն ի յաւելուածոցն յիստկէ եւ սրբէ զհովութիւնն որ յաղիքն է ժողվել. եւ սրբէ զանձն եւ թեթեւ առնէ, եւ զարիւնն նօսր եւ յիստակ առնէ եւ ի բարակ երկնին աղէկ է իւր գայլելն եւ գնալն:

Եւ սաֆրան որ բնութեամբ չի լինի՝ ինքն Գ ցեղ է. յառաջն այն է որ գունն դեղին լինի, եւ պատճառն այն է, որ բնութիւն գիճութեանն ի յինքն է խառնել եւ իւր տաքութիւնն պակաս է քան զբնութեան սաֆրային. գուշակէ որ գկերակորն յուշ մարսէ եւ զանձն վատուժ առնէ. եւ Բ ցեղ սաֆրան այն է, որ գէտ հակթի դեղնուց լինայ. պատճառն այն է, որ թանձր պալղամին գիճութիւնն ի բնութեանն սաֆրան է խառնել. եւ այսոր տաքութիւնն պակաս է քան զամէնն. գուշակէ զայն ջերմն, որ դիպ ասեն եւ շատր ալ դիպ, եւ ծարաւ եւ տաքութիւն փորոքին. եւ Գ ցեղ սաֆրան այն է, որ գունն գէտ քուռաս է, եւ սաֆրան որ այս կերպովս լինի՝ շատն ի ստամոքն լինի, եւ իր պատճառն այն է, որ գէճ իրվին շատ լինի կերել. գուշակէ ստամոքին վատութիւն եւ լերդին, եւ գվնասակար ցաւերն. եւ Դ ցեղ սաֆրան այն է, որ գունովն ժանկառի է. եւ այն սաֆրան որ այս կերպովս լինայ՝ նա խիստ պեղծ է. գուշակէ որ խառնվածն ստամոքն այրել է. եւ այս նշանս մահու նշանն ունէ:

Եւ սավտան որ բնութենով է՝ նշանն այն է, որ համն ի թթվութիւն քշտէ եւ թանձր լինի եւ գունն սեւ լինայ որպէս

մրոր արեանն որ մթնգուն, եւ սավտան որ այս կէրպովս լինայ՝ եւ գստամոքն գորացնէ եւ զկերակորն տայ մարսել եւ զմիտքն սուր այնէ, զմարդն ի բանն ճարտար այնէ եւ սրտային առնէ, եւ ոսկերացն կերակորն յիրմէն լինի:

Եւ սավտան որ չէ բնութամբ՝ Գ ցեղ է. յառաջն այն է, որ բնութեան սավտան այրել է, ի տաքութիւն կու քշտէ, համն թթու է. եւ այս սավտային եւ բնութեան սավտային մէջն բաժանումն այն է, որ թէ այս սավտային վերայ ճանճն նստի՝ մեռնի: Բայց ճանճ նստիլն ի սավտային բնութեան ի սրութենէն է, եւ թէ ի վրան ճանճ նստի՝ գուշակէ որ բնութիւնն աւիրել է եւ խեւութիւն փոխել. այն է որ շտեր եւ բշտեր եւ պեղծ խոցեր առնէ: Բ-ն այն է, որ այրած սավտան է որ այրել է, եւ գունովն սեւ է եւ փայլուն է, որպէս գսեւ ձութ, եւ համն թթու, եւ ինքն սուր է եւ տաք քան զամէն ազգ սավտանին. գուշակէ պեղծ եւ դժար եւ սպանող ցաւեր, որպէս սարատան եւ գողութիւն եւ տայուն եւ զայն հիւանդութիւն որ չընդունի գստածումն. եւ Գ այն է, որ գունովն զէտ զպատինճան լինայ. եւ այսոր սրութիւնն եւ տաքութիւնն պակաս լինի քան զայն Բ ազգ սավտան որ յիշեցի, եւ այս այլ գուշակէ պինտ ուռեցնի եւ զայն ցաւն որ ճար չկայ ողջանալու եւ մնայ ի յանճն մարդուն:

Եւ այս է Դ բաժանումն բնութեան խառնուածոց կամօքն աստուծոյ. ամէն:

Գիտացի՛ր, որ տէր Աստուած է ստեղծեր զմարդն, եւ ամէն բժշկապետք եւ իմաստասէրքն միաբան են ասացեր եւ

չկայ հակառակ խօսք, որ գմարդն ի շորս նիւթ է ստեղծեր, որ է խառնված ի կրակէ եւ ի յօղէ եւ ի ջրէ եւ ի հողէ. եւ փառք արարչին եւ անմահին, որ գամէն արարածս գոյացոյց եւ գայս Դ հակառակն ի մէկ տեղ միատրեաց եւ յօրինեաց: Եւ արարիչն Աստուած ի յարարածս զինչ որ ստեղծեց՝ նա այս Դ հակառակէն հիմն արար. եւ ամէն անասնոց կերակուր յօրինեաց. եւ ամէն անասուն զկերակուրն կուտէ. եւ այն կերակրին ուժն է որ յանձն կու բաժնի եւ զանձն կու սնցնէ, եւ այն կերակրին ուժն է, որ յարտաքս ելանէ յանձնէն, եւ յորժամ յաւելնայ ի յայս կերակրոյ՝ նա բնութիւնն կուզէ որ ի դուրս հանէ զաւելվածն Բ պատճառի համար. Ա այն է, որ այնոր յաւելվածն որ ի յանձն յաւելցել է՝ ի դուրս ելանէ. Բ այն է, որ անասուն մն այլ ընծայի Աստուծոյ հրամանաւ: Ի յարկան եւ ի կնկան սերմէն է ստեղծեր զաւակն. եւ յորժամ մերձաւորութիւն այնէ այրն հետ կնկանն՝ նա սերմն անկանի արգանդն կնոջն: Եւ զարգանդն վասն ծննդեան ստեղծեր է Աստուած. եւ ի յամէն անդամոցն մէջն քան զկնկան արգանդն աճայիպ եւ զարմանալի իրք չկայ, որ տղան ի մէջն կու ընծայի ինն ամիս: Եւ հանց գիտացի՛ր, որ զարգանդն որպէս հալաբուշտ ստեղծեր է Աստուած, եւ յերկան է, եւ ի բշտին ներքեւն է եւ բոլոր է, եւ վիզ ունի որպէս արկան ծածուկ մարմինն, եւ մէկ ծարն ի կնկան ի ծածուկ մարմինն կիպ է, եւ բերան ունի որպէս ձկան: Եւ ինքն Բ տապաղայ է, եւ միջի տապաղան Բ բաժին է, որպէս որ քեզ օրինակ. որ թէ գոռոսի տապաղան յիրմէն զատես՝ նա Ա արգանդէն Բ արգանդ երեւնայ, Ա ի յաջ դիհն եւ Ա

ի ձախ դիհն: Եւ ամէն անասուն որ Էգ է՝ արգանդ ունի. եւ Աստուծոյ զօրութիւնն այն է, որ թէ Ա արգանդն Բ տղայ ընծայի՝ նա ամեն մէկին կերակուրն գատ ի գատ լինի. եւ թէ կտրիճ տղայ լինայ՝ յաջ դիհն լինի, եւ թէ աղջիկ տղայ լինայ՝ ի ձախ դիհն լինի արգանդին: Եւ յորժամ այրն ի կինն մերձենայ՝ նա արգանդին բերանն կու բացվի, որ սերմն ի մէջն կու ցրուի եւ լցվի, եւ յորժամ գսերմն արգանդն ի յինքն առնու՝ բերանն կու խփվի, հանց որ երկաթէ միլն չի բանար գբերանն: Եւ այն սերմն կու մնայ ի յարգանդն եւ կու խառնի ի կնկան սերմն, եւ Բ սերմն մէկ լինի: Եւ բժշկապետքն ասացել են, թէ յորժամ սերմն ի յարգանդին յաջ դիհն ընկնի՝ նա տղան կտրիճ լինի. եւ թէ ի ձախ դիհն անկանի՝ նա տղան աղջիկ լինի. եւ թէ արկան սերմն ուժով լինայ եւ զարգանդին զերկու դիհն այլ լնու՝ նա երկու կտրիճ լինայ: Եւ պատճառն այն է խառնելուն կնկան եւ այրկան սերմն մէկ ի մէկ, որ արկան սերմն կերակուր կառնէ զկնկան սերմն: Եւ կնկան սերմն արկան սերմին կերակուր լինալուն պատճառն այս է, որ արկան սերմն թանձր է եւ բնութիւնն տաք է, եւ կնկան սերմն նօսր է եւ բնութիւնն հով է. եւ արկան սերմն անհնար է որ ի յարգանդն ճապղի վասն իր թանձրութեան եւ տաքութեանն, եւ կաւիրի եւ չի ընծայիր, եւ պատեհ է որ խառնի կնկան սերմն ի յինքն, որ մոհթատիլ լինայ: Եւ արկան սերմն թէ տաք է եւ թանձր է՝ որձ լինի տղան, եւ թէ հով եւ նօսր լինի՝ Էգ լինի տղան որ ծնի: Եւ թէ արկան սերմն շատ եւ զօրաւոր լինի՝ նա տղան ի հայրն կու նմանի: Եւ սերման բնութիւնն այն է, որ յորժամ սերմն արգանդն անկանի եւ

կապի՝ Է օրն արիւն դարձի եւ խանձի այն արիւնն որ ի հայգէն գայ, եւ կերպարան լինայ, որպէս որ այն գօղվածն է որ իսպիտակ է, որ է ոսկորն եւ ըղեղն եւ երակն եւ ջղերն եւ որ սոցին նման է. այս ամէնն ի սերմէն կու ստեղծուի եւ կերպ կառնու: Եւ այլ պագի գօղվածքն չէ իսպիտակ, որպէս միսն եւ լերդն եւ փայծեղն եւ երիկամն եւ որ սոցին նման է, եւ ամէնն ի հայգին արիւնէն է: Եւ սիրտն ի շիրեանին արիւնէն է յօրինած: Եւ այս կերպն որ յիշեցի՝ նա այսոր բժշկապետքն դուվաթի մուսավիրայ ասեն, եւ յառաջն կու ստեղծանի գօղվածոցն զսիրտն եւ ըղեղն եւ լերդն: Եւ յորժամ քառասուն օր անցնի՝ միս կապի, եւ յետոյ ոսկոր լինի, եւ յետոյ երակ եւ ջղեր եւ այլ գօղվածքն, որպէս աչքն եւ բերանն եւ ձեռքն եւ ոտքն, եւ այլ գօղվածք մորթ լինի: Եւ յորժամ Գ ամիս եւ Ժ օր լինի՝ հոգի գայ ի մարմինն. եւ կերակուր նորա հայգին արիւնն լինի մինչեւ ընծայի, եւ այնով սնանի տղան. եւ զինչ որ պատեղվորն ուտէ՝ նա լերդն արիւնն առնէ եւ ուղարկէ յարգանդն կնոջն, որ գաւակն կերակրի: Քանի որ տղան ի մօրն փորն է՝ գլուխն վեր է եւ կանգնման է, եւ ի ծնընդեան ժամն շրջի արգանդն, եւ գլուխն վայր եւ ոտքն ի վեր լինի, եւ բաժանի ի մօրէն, եւ Գ մութն տեղաց ի դուրս գայ. մէկն ի շամիմայէն, երկուք արգանդէն, երեք ի փորուն, կամօքն Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաիտեանս, ամէն:

Բայց նիւթն եւ ժամանակն ծննդեան տղային ազգի ազգի է, եւ շարժումն եւ կատարելութիւնն այլ աւելի է եւ պակաս: Եւ յորժամ տղան Ե ամիսն ընծայի՝ նա Լ օրն կերպ եւ պատկերն կատարի, եւ Կ օրն շարժի եւ կատարի, եւ ՃՁ

օրն կատարի եւ ընծայի աստուծով: Եւ թէ Էգ լինի՝ ի կատարելն ԼԵ օրն լինի եւ շարժումն ի Հ օրն եւ կատարումն ԲՃԺ օրն լինայ աստուծով: Եւ թէ տղան Թ ամիսն ծնանի՝ նա կտրիճ լինի, եւ ի Խ օրն կատարեալ լինի, եւ ի Ձ օրն շարժի, կատարումն ԲՃԺ օրն լինայ: Եւ թէ աղջիկ լինի՝ պատկերն ԽԵ օրն լինայ եւ շարժումն Ղ օրն, եւ կատարումն ԲՃՀ օրն լինայ: Եւ թէ Ժ ամիսն ծնի եւ կտրիճ լինի՝ կերպն պատկերացն ԽԵ օրն լինի եւ շարժումն Ղ օրն եւ կատարումն ԲՃՀ օրն լինայ: Եւ թէ աղջիկ լինի՝ նա պատկերն Ծ օրն լինի եւ շարժումն Ճ օրն լինի եւ կատարումն ԳՃ օրն լինայ: Եւ թէ տղան Ը ամիսն ծնի՝ անհնարին Է ապրիլն նորա. այն պատճառովն, որ տղան ի մօրն փորն յորժամ Է ամսու լինայ՝ շարժի եւ խախտի ի տեղացն եւ ձայն հանէ. եւ թէ տղան ուժով լինայ որ ծնի՝ նա ապրի, այնոր համար որ շրջագայութիւնն ի եօթ մոլորականացն ի վերայ կատարեցաւ: Եւ թէ վատուժի՝ դուրս գայ տղան վատուժութեամբ եւ ցաւով. եւ յորժամ ընծայի՝ ոչ ապրի այն պատճառին համար, որ աս Ը ամսու տէրն Չօհայն է, եւ Չօհայն չար աստղ է եւ հողային է, եւ Ը տանն տէր՝ աստղաբաշխաց հաշվովն մահուն տունն է:

Եւ այլ թէ տղան Թ ամիսն ծնի՝ նա ապրի, այնոր համար որ այս Բ ամիսն գվատուժութիւնն եւ գցաւն կու տանի եւ կու փարատէ եւ գօրացնէ. եւ այս ինն ամիսն Մուշթարին է: Եւ թէ ի ծննդեան ժամն տղին Տալէհն ի մահուն պուռն լինի եւ կամ Տալէհն ի հողային պուռն լինի կամ Բ չար աստղի մէջ լինի՝ նա տղան մեռած ընծայի: Այն պատճառին համար

յիշեմ որ յորժամ տղան ի մօրէն քաժանի՝ նա պիտի որ լայ: Նա բժշկապետքն ասացել են, թէ տղան ի լալն եւ ի կանչելն Բ խօսք կայ. ոմանք ասացել են թէ այնոր համար կուլայ, որ ի տեղացն գատեցաւ, եւ ինքն արարչին հրամանաւն է որ հանց ի նեղ եւ ի մութ տեղացն ի դուրս գայ ի Թ ամսոյ տեղացն, վասն այն տեղացն համար կուլայ: Եւ թէ մի ոմն որ հանց նեղ եւ մութն տեղումն կենար՝ շէր ապրիլ, եւ փառք արարչին եւ անմահին: Եւ այլ պատճառ, որ յորժամ տղան ելանէ ի յարգանդէն, եւ մէկ մատն պակաս լինենայ՝ ամէն արարածք ժողովին եւ շկարեն լմնցնել:

Եւ այլ ասկից ի վեր յիշենք զամէն անդամոցն զգոյութիւնն թէ որպէս է, եւ բժշկութեան պատմութիւն անդամոցն. որ է օրհնեալ անգրաւ եւ անթերի:

Իսկ թէ ո՛րպէս ծնանի տղան ի մօրն ի փորն այսպէս գիտացիր:

Երբ այրն եւ կինն մերձենան՝ նա գայն գիճութիւնն Զօհալն չորցնէ եւ առաջի ամիսն ծառայէ: Եւ Բ ամիսն Մուշթարին պահէ, եւ գայն գիճութիւնն յարին դարձուցանէ: Եւ Գ ամիսն Մառեխն պահէ, որպէս եւ ինքն կիզող է՝ զարիւնն եւ զօղված կտրէ: Եւ Դ ամիսն Արեգական է. զօղվածն եւ զզղերն ամրացնէ եւ շնչաւոր առնէ: Եւ Ե ամիսն Զօհրան պահէ զաչքն, եւ զրդեղն շինէ: Եւ Զ ամիսն Օտարիտն պահէ, քաժնէ եւ պնտէ ու զոսկերն շինէ: Եւ Է ամիսն Լուսինն պահէ զուտելեաց տեղն, եւ զստամոքն շինէ: Թէ տղան Է ամիսն

ծնի՝ ապրի. հանգոյ ապրի, որ Է աստղի հայեցք լման կայ ի յինքն: Եւ Ը ամիսն Չօհալին Է. թէ ծնի՝ չապրի, վասն այն որ Ը տուն մահու ասացին: Եւ ինն ամիսն այլվի Մուշթարին Է պահող, թէ ծնի՝ ապրի, վասն այն որ գՄուշթարին կենաց տուն ասեն:

Իսկ յորժամ ընծայի տղան՝ դու հաշվէ՛ զկենդանակերպն թարպեղ դէպի յառաջ, եւ տե՛ս, երբ տղան ծնաւ, թէ Լուսինն յո՛ր կենդանակերպ Է, եւ ե՛րթ ի յետ ԲՃՀԳ օր եւ գիտացիր յայտ, ԺԴ ատուրդ ի միջի կայր Լուսին, որ լինայ կենդանակերպն որ յառաջ ծնաւ յայն տարաճան, որ չի լինի տղալումն, եւ գիտենաս զչարն եւ զբարին աստուծով:

Եւ մարդակազմութեան յառաջն գոսկերքն յիշենք եւ այլն ի կարգաւ աստուծով:

Գրեր Է ի գանոնն, թէ մարդուն հոգին կու շրջագայի ի մարմինն հանապազ. վասն այնորիկ ժամանակ լինայ, որ ի տեղ մն Ա ասեղ զարնեն՝ նա կու մեռանի, եւ ժամ լինի, որ թէ քանի սրով կտրեն՝ նա զէն չի աներ. եւ ցաւն այլ այսպէս Է. յորժամ որ ցաւ մի հանդիպի մարդուն՝ յանկարծակի մեռանի, քանզի հոգին անդ գտանի հետ ցաւուն եւ յանկարծամահ առնէ կամօքն Աստուծոյ մերոյ:

Ե

Գիտացի՛ր, որ գոսկերքն մարդուն որպէս սուն է արարեր անձինն արարիչն Աստուած, եւ մարդուն հիմն առանց ոսկերի չի լինիր եւ չկարել կանգնիլ ի վերայ ոտիցն:

Եւ յառաջի ոսկր գլխուն պնակն է, որ կապել է զիրար, եւ քան զամէն ոսկրն անձինն գլխուն ոսկրն ամուր է եւ յուժով է եւ ի հողն յուշ կու փթի. այնոր համար արարիչն Աստուած զգլխուն ոսկրն ամուր է արարեր, որ մէջն մեծ եւ պատուական անդամոցն, որ այն անդամն վնաս չի հասնիր: Եւ զգլուխն այնոր համար բոլոր ստեղծեց Աստուած, որ այն իրքն որ բոլոր է՝ չի վնասիր եւ այն որ Դ անկիւն է եւ Գ անկիւն է՝ նա կու վնասի, եւ մէջն քիչ իրք կու առնու: Եւ ինքն բոլոր է եւ Չ կտոր է եւ մէկ մէկ ի կից է, զետ կարած, հանց որ ի կցած տեղացն մէկ մէկէ չի բաժնիլ:

Բայց այս որ մէկ ի մէկ կից է՝ պատճառն Գ իրք է. յառաջն այն է որ ան պուխարն որ ի ստամոքէն ի գլուխն կու ելանէ՝ այն ի յայն կցուածոցն կու հոնծի եւ կու ելանէ. եւ թանծր պուխարնին եւ լազիճ պալղամնին ի քթին ծակէն ի վայր կու իջնու, որ մարդն ի գլխացաւութենէ ի վնասակար ցաւուն անհոգ լինայ. եւ Բ պատճառն այն է, որ թէ Ա կտորին վնաս հասնի՝ նա ալ պաղին անհոգ լինայ. եւ Գ այն է, որ գլխուն առջեւի ոսկորն կակող է եւ յետեւինն պինտ. անհնար է որ մէկ ոսկորն պնդութիւն եւ կակողութիւն գտվի:

Եւ այս Ե զգայութիւնս որ կայ՝ նա ի գլխուն է Գ

զգայութիւնն, եւ մէկն ի ձեռքն է: Եւ յառաջն աշիշ տեսութիւնն, եւ Բ ականջին լսելութիւնն, եւ Գ քթին հոտալիքն, եւ Դ լեզվին համ առնելն. եւ այն մէկ զգայութիւնն ի ձեռքն է, եւ այն է որ զծանրն եւ զթեթեւն, կակուղն եւ զպինտն յիմանայ:

Եւ վերի ակռային ոսկորն ի գլխոյն ոսկրն ի կից է եւ ինքն ԺՉ է, եւ Դ ցեղ է – եւ Դ եփող է, եւ Դ ծամող է, եւ Դ այլ կտրող է, եւ Դ կու աղայ որպէս զջաղաջք: Եւ այլ ոսկորն կգակին Բ կտոր է. եւ Բ եզերն ի գլխուն ոսկորն կից է եւ ամուր, եւ ԺՉ ակռան ի յինքն ամրացուցած է: Եւ մարդուն ջաղաջքն ակռանին է. եւ մարդուն ջաղջին՝ վարն կու շարժի. եւ այն որ ջաղաջքն է՝ վերին քարն կու շարժի. եւ Բ քարն մէկ մէկ հետ, ոչ աւելի է եւ ոչ պակաս է. եւ վերի ակռանին եւ վարին ըղորդ չեն, անոր համար որ վարի ակռանին բարակ է քան զվերինն. եւ թէ հաւասար լինար ամենն՝ իսկի բան չէր կատարեալ գործել: Եւ ամէն զօղվածն Աստուծոյ զօրութեամբն է յօրինած. բայց կգակին ոսկորն ի վզին ողաշարն ի կից է. եւ ինքն Ե ողաշար է. եւ իր բարձրութիւնն եւ երկարութիւնն Դ մատ է: Եւ արարչին զօրութիւնն այն է, որ զինքն Ա կտոր շարաւ. թէ մէկ կտոր լինէր վզին ոսկորն՝ նա վիզն չէր ճկիր. եւ գլխուն ոսկորն ի վզին ողաշարն ի կից է. թէ ամէնն մէկ կտոր լինէր՝ նա մարդն ի վեր չէր կարել նայիր, եւ ո՛չ ի վայր, ո՛չ ի յաջ դիհն եւ ո՛չ ի ձախ, ոչ ի յետն եւ ո՛չ ի յառջեւն չէր կարել նայիլ եւ չէր կարել շարժիլ եւ յերկինքն չէր կարել նայիլ, մակար ի վրայ կռնակին պատկէր եւ ապա թէ տեսանէր գերկինքն: Եւ այս ողաշարներուն ամէնուն մէջն ծակ է. եւ որպէս ըղորդ կայ եւ

երթայ մինչեւ յանձն: Եւ թէ մարդն վիզ չունենար՝ նա ձայն չէր լինիր. այնոր համար որ անասուն որ վիզ չունի՝ նա ձայն չունի. որպէս ձուկն եւ խեչափարն եւ որ նման է սոցա:

Այլ իմացի՛ր, որ կոնակին ողաշարն ԺԲ ողաշարն է. եւ այս ողաշարքն մեծ է եւ ուժով է քան զվզին ողաշարքն. բայց ծակն փոքր է քան զվզին ողաշարին ծակն: Եւ կշտին ողաշարն Ե է, եւ այս ողաշարն մեծ է քան զկոնակին ողաշարքն. եւ այս ամէն ողաշարքն յիրար ի կից է, բայց չէ ամուր ամրացուցած. եւ Դ ողաշարն ամուր է. եւ մէկ ի մէկ կիպ է եւ կապած է եւ կցած է. եւ այս ամէն կցուածոցն ի մէջն գիճութիւն կայ, որ գայն շարժելու տեղն գէջ պահէ որ չի չորանայ. եւ թէ չոր լինայ՝ նա մարդ որ շարժի՝ ոչ կարէ շարժիլ ի յաջն եւ ի ձախն, եւ ոչ ծունր կարէ դնել: Եւ ամէն ողաշարն Բ ծակ ունի, մէկ ի յաջ դիհն, եւ մէկ ի ձախ դիհն, եւ ամէն ծակն քիչ մն իսպիտակ ըղուղ կայ ի դուրս ելնէ: Եւ կոնակին ողաշարքին ըղուղքն քիչ մն պինտ է:

Եւ կողերն ԻԴ կող է, եւ որն երկան է եւ որն կարճ է: Եւ ԺԲ այն է որ յաջէն եւ ի ձախէն ճոթերն ի կոնակին ողաշարն կից է. եւ մէկայլ ծարերն ի կրծոց ոսկորն ի կից է. եւ Ժ կող այլ կայ որ մէկալ ծարն ի կոնակին ողաշարին կից է, եւ մէկդին իսկի տեղ կից չունի: Եւ տէր Աստուած գայս կողին ոսկորնին այնոր համար ծուռ գէտ անեղ արաւ, որ զփորու միջի անդամքն եւ զօղվածն անվնաս պահէ, եւ յորժամ պառկի մարդն ի գետինն եւ ի քուն լինայ՝ նա գէն չի գայ փորուն զօղվածոցն: Եւ այնոր համար կիսաբոլոր է, որ Բ կէսն Ա բոլոր կու լինայ, եւ այն իրքն որ բոլոր է՝ մէջն

շատ իրք կու առնու. եւ կողերն գփորն անվնաս կու պահէ ի պառկելուն ժամն: Եւ ամէն մարդու ոսկրն ցեղ մն է, որուն յերկան է եւ որունն կարճ է, եւ որուն բարակ է եւ որուն հաստ, եւ որուն թանձր է եւ որունն նօսր: Եւ թէ գամէնն յիշէմք՝ խօսքն կու շատանայ եւ կարդացողնին դժար կու լինայ եւ կու ձանձրանայ: Եւ փառք Աստուծոյ. ամէն:

Կերպ ստեղծման գլխուն եւ ըղեղանն այս է

Գիտացի՛ր, որ Գ զօղվածք կայ ի յանձն մարդուն որ ինքն ի մեծ անդամոցն, որ տաճիկն յազայի ըռայիսայ ասէ. այնոր համար որ այս Գ զօղվածք նոյն գործն ի յանձն շատ են: Մէկն սիրտն է, որ է ինքն թագաւոր անձինն, եւ երկուքն ըղեղն է, որ է համախոհ սրտին, եւ իրեք լերդն է, որ ինքն տանուտէր է եւ բաժանող է ամէն անձին: Եւ գիտացի՛ր, որ ըղեղին ամանն գլուխն է, եւ ուժն ի յաչքն է. եւ աչքն պահապան է անձինն, եւ աշացն լուսաւորութեան պատճառն ի յըղեղէն է. եւ զայս երկուքն այլ տէր Աստուած այնոր համար ի բարձր տեղ է ստեղծեր, որ ի յամէն վնասէ պահէ զանձն. եւ զինչ իրք որ ի հեռու տեղաց լինայ՝ տեսնու, եւ այն իրքն որ բարի կայ՝ նա կցցի յինքն, եւ այն որ չար է՝ յետ փախչի: Եւ ըղեղին բնութիւնն հով է եւ գէճ, եւ ինքն ի գլխուն մէջն Բ ծածկոցի մէջ է եւ այսպէս է ինքն ի գլխուն ի մէջն, որ Բ ծածկոց ի դուսի դիին է, եւ այլ պագին ի ներսի դիին է:

Բայց դուսի ծածկոցն ի գլխուն պնակն ի կիպ չէ, ի գատ

է, այնոր համար որ գգլուխն ի յամեն վնասէ պահէ. եւ այս ծածկոցն մինչեւ ի քթին ծակերն կու գայ: Եւ շատ ծակեր կայ քամոցի պէս. եւ այս ծակերուն ներքեւն Բ ոսկոր այլ կայ ի յայն ծակերուն դիմացն որպէս քամոց. եւ այս ծակերուն որն ծուռ է եւ որն ըղորդ. եւ այս ծակերն յղեղէն հեռու է այն պատճառին համար, որ յորժամ գշունչն ի վեր քաշէ՝ նա հով քամին ի յղեղն չի հասնի եւ գէն առնէ: Բայց քնքին ծակն այսպէս է, որ ի քնոցն յետեւէն բոլոր է. եւ ըղեղին ի մէջն մտել է այն Բ ոսկորն, որ ասացի թէ գէտ քամոց է եւ ինքն ի կից է: Եւ այն ծակի վերի դին որ ի քիմն է՝ նեղ է քան զայն որ ի քթին դիմն է ի կից. եւ իր օգտութիւնն այն է, որ յորժամ մարդն գրեթեանն խփէ՝ նա գշունչն անկից առնէ եւ տայ ի քուն եւ արթուն. այն շարժողական երակքն ի յղեղէն գան եւ այս ծածկոցէն ի դուրս լինին: Եւ Բ ծածկոցն որ ի մէջն է՝ Բ ծածկոց է: Գիտնալ կու պիտի, որ ըղեղն Գ բաժին է եւ մէկ ի մէկ ամուր ի կից է: Եւ բժշկապետքն այսոր պտունի տմաղ ասեն եւ ի յայս պտունի մէջն կարմիր երկնի կայ. եւ այս երկնուն որն շարժող է եւ որն խաղաղ է, որպէս որ պիտի յիշեմ, թէ Աստուած կամենայ:

Բայց առաջին փորոքն, որ է պատն որ ի ճակատին դիմն է՝ քան զան Բ բաժինն մեծ է, եւ ինքն հիմն է եւ տուն է տեսողութեան. եւ աչացն լուսատրութիւնն եւ մթնալն ի յայն փորոքնուն է. եւ կայ ի յինքն երկու ջիղ, մէջն փուճ, եւ ի յաչքն կից է եւ աչացն լոյսն յայս ջղերուս կու անցնի: Եւ այլ գիտացի՛ր, որ ի մարդուն ի յանձն քան զայս ջիղն փուճ չկայ. եւ թէ այս Բ ջղին գէն հասնի՝ նա աչիչն տեսութիւնն

խափանի: Եւ երկու փորոքն ըղեղին որ կից է՝ յառաջի փորոքն ինքն տուն է խելացն եւ յիշողութեան. եւ յորժամ այս փորոքնին գէն հասնի՝ նա կորուսանէ գլխելքն, եւ լինի յիրմէն սարյայ եւ սքթայ եւ լակուայ: Եւ Գ փորոքն տուն է պահողութեան եւ յիշողութեան. գանցեալն չի մոռանայ եւ յիշէ, եւ ինքն մէջն է ամէն ջղերուն եւ ինքն փոքր է քան գամէն փորոքն: Եւ գայսոց գամէնուն գկերպն պիտի յիշենք թէ Աստուած կամի: Եւ յորժամ այս փորոքիս գէն հասնի՝ նա ամէն ջղերնուն գէն հասնի եւ վատուժ լինայ, եւ մարդն մոռացկոտ լինայ, հանց որ իսկի իրք չկարել որ ի միտք պահէ:

Եւ գկերպն գլխուն եւ գբաժինն եւ գփորոքն ըղեղանն եւ ծածկոցնին եւ գայն Բ ջիղն որ մէջն փուճ է՝ յիշել կամիմ թէ Աստուած կամի՝ Է դուռն – գաշքն եւ գկերպն ամենայն ձեռով, որ ուսանողին հեշտ լինի:

Կերպ ստեղծման սրտին

Գիտացի՛ր, որ սիրտն տաք է եւ չոր եւ իւր տեղն ի կրծոց ի ներքեւն է եւ ի ձախ դիհն. եւ ինքն թագաւոր է անձինն, այնոր համար որ ինքն հոգուն տուն է եւ հիմն է առողջութեան, եւ բնական տաքութիւնն ի յինքն է տպաւորել Աստուած. եւ ինքն պինդ մսէ է գոյացել, եւ ինքն յամանի մէջ է ամուր որ չի վնասի: Եւ իր ամանն այսպէս է, որ սիրտն ի յինքն չի հասնիր, եւ բոլոր պատեր է թոքն գինքն. եւ այսպէս որ մարդ ի ձեռն խնձոր մի առնու: Եւ ձեւն սրտին որպէս փիճոյ ծառին հատին

նման է, որ պարսիկն ճալդուգայ ասէ այս հատիս. եւ ինքն հանց բոլոր է՝ որպէս զինքն խառատն է տաշել, եւ մէկ ծայրն բարակ եւ մէկ ծայրն հաստ:

Այլ իմացի՛ր, որ սիրտն Բ ականջ ունի, մէկ ի յաջ դիհն եւ մէկ ի ձախն. եւ այն փորն որ ի յաջ դիհն է՝ Բ ճանապարհ ունի. Ա երկան է, այն է որ ի լերդէն արիւն կու գայ ի սիրտն, եւ Բ այն է, որ ի սրտէն ի թոքն կերակուր կուտայ: Եւ այն փորն որ ի ձախ դիհն է՝ նա յինքն Բ ճանապարհ կայ. Ա վասն օդոյ է, որ զթոքն շարժէ եւ սիրտն հասցնէ եւ զինքն հովացնէ. եւ Բ այն է, որ այն երակն որ կու օդայ, ինքն հիմունք ամէն շիրիանուն եւ հիմն տաքութեան. եւ պայծառութիւն ամէն անդամոցն. եւ այս երակնէն է որ յիշեցի: Եւ ի յայն զօղվածն որ ի լերդէն երակ մն երթայ՝ նա պիտի որ ի սրտէն երակ մն այլ երթայ. եւ այն զօղվածին որ շիրիանին երկնին վնաս հասնի՝ նա տաքութիւնն այն զօղվածէն կտրի, եւ այն զօղվածն ի գործուն մնայ եւ խափանի:

Բայց ի մօտոյ իմացի՛ր, որ պայծառութիւն եւ տաքութիւն ամէն անդամոցն այն մէկ քանի կաթ արիւնէն է որ ի սրտին մէջն է ստեղծել Աստուած. եւ յորժամ արիւնն ի հովութենէ եւ ի չորութենէ պաղի՝ նա պիտի որ մարդն մեռանի: Եւ արարիչն Աստուած ի սիրտն Բ ականջ եւ Բ փոր ստեղծեց, եւ այն զօղվածն որ Աստուած ի մարդուն պիտեւան է ստեղծեր՝ նա զինքն Բ է ստեղծել, որպէս Բ աչք եւ Բ ականջ եւ Բ ձեռք եւ Բ ոտք, որ թէ մէկին վնաս հասնի՝ նա մէկն ի տեղն կենայ: Եւ Քրիստոսի փառք:

Կերպ յօրինվածոց լերդին թէ որպէս է

Գիտցի՛ր, որ լերդին բնութիւնն տաք է, գէճ է, եւ իր բնական տեղիքն ի կրծոց ի ներքեւն է յաշ դիին, եւ քիչ մն վար է ի կրծոցէն. եւ իր ձեւն որպէս է ատուր լուսնի նման է, եւ ինքն կից է ի ստամոքն, եւ ստամոքն ի յիր փոսին մէջ է, որպէս որ մարդն ի ձեռն թուրինճ առնէ, եւ լեղին ի յինքն կախ է:

Եւ բժշկապետքն ասացել են, թէ լեղին որպէս կրակ է, եւ լերդն որպէս կասկարաք է, եւ ստամոքն որպէս պտուկ, եւ կերակուր եւ ընկելիքն մտնու եւ եռայ: Եւ զինչ որ ստամոքն գիճութիւն լինի՝ զամէնն լերդին երկնին ի յինքն քաշէ, որպէս որ ծառին մագմտուկն զջուրն ի գետնէն քաշէ: Եւ յորժամ կերակուրն ի բարակ աղեստանն հասնի՝ նա լերդին երկնին ի մէջն զգիճութիւնն ի յինքն կու քաշէ, եւ զայն ամէն գիճութիւնն լերդն առնէ եւ արիւն այնէ, եւ զայն արիւնն ի յամէն անձն բաժանէ. եւ այնոր համար է որ ասացած է, թէ լերդն տանուտէր է անձինն: Եւ ամէն զօղված երակ մն կայ ի լերդէն, որ արիւն կուղարկէ եւ ի ժիր զան զօղվածն թաժա կու պահէ եւ յուժով: Եւ յորժամ այս երկուսին մէկն կապի՝ նա արիւն չերթայ անձն, եւ այն զօղուածն թոռնի եւ վատուժի եւ մնայ ի բանէ եւ դեղին լինի անձն:

Կերպ ստեղծման փայծղանն թէ որպէս է

Գիտացի՛ր, որ փայծղանն բնութիւնն հով է եւ չոր, այն

պատճառին համար, որ ինքն տուն է սավտային, եւ իր բնական տեղիքն ի ձախ կողին ներքեւն է. եւ իւր ձեւն երկան եւ տափակ է, որպէս եզան լեզու: Բայց այն դիհն, որ ի ստամոքն կիպ է՝ նա քիչ սն փոս է: Եւ Բ մեծ երակ ի փայծղէն ի ստամոքն ի կիպ է, որ Բ ձկան բերնի պէս, որ փոքր լինայ. եւ Ա բերանն այնոր համար է, որ գսավտան ի ստամոքէն քաշէ. եւ մէկալ բերանն այնոր համար է, որ գսավտան ի ստամոքին բերանն վաթէ. եւ յորժամ որ ստամոքն պարապ լինայ ի կերակրէ՝ նա այն սավտան բարք բերէ եւ կերակուր տայ ուտել եւ զկերակուրն մարսել տայ: Եւ օգտութիւն փայծղան այն է, որ զարեան մրուրն ի յինքն քաշէ եւ զէտ զինք առնէ. եւ իր կերակուրն այն մրուր արիւնն է: Որպէս փայծաղն թեթեւ եւ քնքուշ է եւ ցանցառ է՝ եւ թանձր խառնվածքն ի յինքն շուտ կու մտէ եւ ինքն շուտ կու քաշէ:

Կերպ ստեղծման թորին թէ որպէս է

Գիտացի՛ր, որ թորին բնութիւնն հով է եւ գէճ, եւ ինքն ի կրծոցն ի մէջն կախ է, հանց որ կրծոցն մէջն ի լիքն է. եւ ինքն Բ ձեով շարժումն ունի, մէկ մէկի հակառակ. եւ բժշկապետքն մէկին հարաքաթի ինպիսատ ասեն եւ մէկալին հարաքաթի ինդիպաղ ասեն: Բայց հարաքաթի ինպիսատն այնոր համար է, որ ի ժիր գհով օղն ի պուկն ի վայր քաշէ վասն տաքութեան համար, որ զբնական տաքութիւնն եւ զբոցն խաղեցնէ: Եւ հարաքաթ ինդիպաղն այնոր համար է, որ ի թորն տաք գոլորշն կու ժողվի եւ զսիրտն

կու այրէ. նա այս շարժումնքն գայն տաք գոլորշն ի պկէն ի դուրս կու հանէ եւ ի բերնին եւ ի քթին ծակէն ի դուրս ելանէ:

Այլ գիտացի՛ր, որ արարիչն Աստուած գթոքն ի քնքուշ եւ ի ցանցառ մտէ ստեղծեր է այնոր համար, որ ինքն զէտ սարուած է՝ որ զօդն ի յինքն քաշէ եւ ի սիրտն տայ, զինչ որ յառաջն յիշեցի: Եւ յորժամ օդն ի յանձն ժողովի եւ քիչ քիչ ի սիրտն հասնի՝ եւ զսրտին գոլորշն ի յինքն քաշէ. եւ այնոր համար է, որ յորժամ մարդն իրք մն պաշտէ եւ կամ կարդայ՝ նա շի կտրի ձայնն. եւ այլ յորժամ զգլուխն ի ջուրն մխէ՝ կարէ համբերել ատեն մն, եւ այլ թէ ի մէկ տեղ մն մուխ կամ փոշի լինայ՝ կարէ որ պահ մն զշունչն քաշէ: Եւ թէ թոքին միսն ցանցառ եւ թեթեւ չէր՝ չէր կարել զայսպիսի գործ գործել եւ զշունչն չէր կարել կրկնէր, բայց այրէր տաք գոլորշնին զսիրտն:

Եւ այլ օգտութիւն թոքին այն է, որ յորժամ զօդն ի յինքն կու քաշէ՝ նա լատիֆ կու առնէ եւ կու եփէ եւ յայնժամ ի սիրտն կու յողարկէ: Եւ իմացի՛ր, որ բնականութեան հոգուն կերակուրն օդն է եւ ուժեղացնէ զբնականութեան հոգին եւ կու զօրացնէ: Եւ որպէս որ լերդն սարուած է, որ զարեան գիճութիւնն կերակրին կու մարսէ եւ արիւն դարձուցանէ եւ զամէն անձն կերակրէ՝ եւ նոյնպէս թոքն այլ սարուած մն է, որ զօդն եփէ եւ լատիֆ առնէ եւ կերակրէ զբնական հոգին եւ ի սրտէն երթայ ելնէ ի յրդեղն եւ կերակրէ զիմաստութեան հոգին. եւ այլ երթայ ի շիրիանին երկնին, հասնի ի լերդն, որ ինքն հոգի բնութեան անուանեն: Եւ զայլ ծածուկ խորհուրդն միայն Աստուած գիտէ, եւ մեք որ այսչափ յիշեցաք՝ նա

բժշկապետաց խօսքն է:

Եւ այլ իմացի՛ր, որ յորժամ թոքն ցաւ դիպի՝ նա դժարութեանք լինի իր փարատիլն վասն Գ պատճառի. Ա այն է, որ յուշ հասնի դեղին ուժն ի յինքն, եւ Բ այն է, որ ի ժիր ի շարժման է, Գ այն է, որ իր էութեան արիւնն պակաս է: Եւ այդ բաւ է:

Կատարեցաւ պատմութիւնն թոքին կամօքն աստուծոյ. ամէն:

Կերպ ստեղծման լեղուին թէ որպէս է

Գիտացի՛ր, որ լեղուին բնութիւնն տաք եւ չոր է. ինքն ի լերդն կիպ է, զինչպէս որ ի յառաջն յիշեցաք: Եւ լեղին այլ Բ բերան ունի որպէս փայծեղն. եւ Ա բերանն այնոր համար է, որ ի լերդին փոս դիւնէն զսաֆրան ի յինքն քաշէ, եւ մէկալ բերանն այնոր համար է, որ զսաֆրան ի ստամոքն վաթէ, եւ զօրութիւնն եւ զլեղութիւնն եւ զծանրութիւնն կերակրին ի ստամոքացն ի դուս հանէ, եւ մարդն ի ծանրութենէն արտաքս ելանելովն խալսի եւ թեթեւանայ: Եւ օգտութիւնն լեղուին այն է, որ զսաֆրան ի յարենէ բաժնէ եւ յինքն քարշէ, որ սաֆրային սրութիւնն զարիւնն չայրէ եւ չաւիրէ զբնութիւնն: Եւ փառք Աստուծոյ արարչին եւ անմահին բարձրելոյն, որ այսչափ օգտութիւն ի մարդն է տպաւորել:

Կերպ ստեղծման երիկամացն թէ որպէս է

Գիտացի՛ր, որ երիկամացն բնութիւնն տաք եւ գէճ է, եւ իր բնական տեղիքն ի կռնակին մէջն է: Եւ յաջ դիհու երիկամն լերդին մօտիկ է այնոր համար, որ ի վեր է քան զձախ երիկամն, բայց երկուքին այլ փոսութիւնն մէկ է եւ ի ամէն մէկ՝ մեծ-մեծ երակ մն կայ, մէջն փուճ. եւ այս երկնիս այլ Բ բաժին կու լինին, հանց որ երկին Ա ծարն ի շիրիանն կցի, եւ շիրիանն ի լերդն կցի, եւ մէկ ծարն ի բշտին վիզն կցի, որ է ջրին ճանապարհն, երիկամունքն:

Եւ բժշկապետքն ասացել են, թէ յորժամ որ սերմն ի յայս երկնուս ծարն գայ՝ նա ի լերդն կից արիւն է, եւ յորժամ որ ի յայն ծարն կցի որ ի բուշտն ի կիպ է՝ նա արիւնն ի սերմն դառնայ. եւ այսպէս է որ գոգին ճանապարհն այլ երիկամացն է:

Եւ գիտացի՛ր, որ թէ գոգելն արիւնի. նա ուժէն ի ճանապարհն իրք մնացել է՝ նա այն արիւնն ի գոգելուն ժամն բաժանի, եւ յայն ժամն որ զգոգն ի բուշտն կու դրկէ՝ եւ երիկամացն ցան ի յայն պատճառէն կու լինի որ յիշեցի կամօքն աստուծոյ:

Կերպ եւ պատմութիւն վասն ստամոքսին

Գիտացի՛ր, որ ստամոքսին բնական տեղիքն ի կրծոցն ի ներքեւն է. բայց վերի դիհն ստամոքսին դէպի ձախ դիհն է, եւ

վարի դիհն դէպի յաջ դիհն է. եւ սիրտն եւ լերդն եւ փայծեղն ի բոլորն է ստամոքին, որպէս որ լերդն յաջ դիհն է եւ փայծաղն ի ձախ դիհն է. եւ ի մէջ՝ կիպ միս կայ, եւ վերն նօսր միս կայ: Եւ այս ամենս ի ստամոքին բոլորն այնոր համար է, որ տաքացնէ գստամոքն եւ կարենայ եփել զկերակուրն. եւ Բ պատճառն այն է, որ յորժամ շատ աշխատիս եւ շարժիս՝ նա ի տեղաց չի շարժի: Եւ իր ձեւն որպէս դդումն է. որ այն դդումն Բ վիզ ունի, այնոր համար որ դդումն ի վերէն ի վայր Բ է կիսած. եւ Ա դիհն տափակ է եւ Ա դիհն գունդ է, ի փորուն դիհն է, եւ իր ձեւն որպէս գտանպուռայ է եւ Բ վիզ ունի, Ա ի վեր է եւ Ա ի վայր: Եւ էութիւն ստամոքիին ցանցառ է այնոր համար, որ պիտեւան է իր զգայութիւնն եւ իմացութիւնն. եւ այն է իր զգայութիւնն եւ իմացութիւնն, եւ զկերակուր յուզելն, եւ աւելի այս իմացութիւն կուզէ քան ստամոքին բերանն. եւ այս ունի զքաղցելութեան ուժն: Եւ մէջն կոկ չէ, որպէս զխաւուն է. եւ մէջն լան է, եւ վերն նեղ է, եւ այս այնոր համար է, որ մարդուն ստեղծուիլն լման եւ կատարեալ է, եւ յորժամ կերակուր ուտէ մարդն՝ նա ամէնն ի ստամոքն իջնու: Եւ ստամոքին բերանն նեղ է եւ մէջն լան է այնոր համար, որ կերակուր շատ առնու եւ այլ պագի զօղվածոցն եւ անդամոցն զէն չառնէ: Եւ արարիչն Աստուած ի ստամոքն Դ ուժ է ստեղծել, եւ բժշկապետքն մէկին դուվաթի ճագիպայ ասեն, որ է քարշողութեան ուժն, եւ մէկալին որ Բ է՝ դուվաթի մասիքա ասեն, որ է բռնողութեան ուժն, եւ յորժամ որ կերակուրն ի ստամոքն իջնու՝ նա բռնէ որ մարսէ եւ անհալ չի հանէ զկերակուրն ի ստամոքէն.

Եւ Գ-ին ասեն դուվաթի հագինայ, որ է եփողութեան ուժն
եւ եփէ զկերակուրն ի ստամոքն, եւ յորժամ որ այս ուժն
պակաս լինայ՝ նա կերակուրն ի ստամոքն անհալ մնայ եւ
թթվի եւ քացվի. եւ Դ-ին ասեն դուվաթի տայֆիայ, որ է
այն ուժն, որ արտաքս հանէ զաւելուածն ի ստամոքէն. եւ
յորժամ այս ուժն պակսի՝ նա յուշ ելանէ յավելվածն ի դուրս,
նա ազգի ազգի ցաւեր ընծայի առ մարդն եւ վատուժի: Եւ
այն ստամոքին միջին խոշորութիւնն երթայ եւ կակղանայ. եւ
պատճառն այն է, որ ի լերդէն գոլն պակաս գայ եւ հասն, եւ
կամ լինի, եւ լերդն ցաւ հանդիպի: Եւ ոմանք ասացել են, թէ
այս արուեստաւորացն ուժերն ամենայն անձն եւ անդամքն
կայ, որպէս որ գործն ի ստամոքն լինի՝ եւ մարտողութիւնն
ի լերդն լինի, եւ քարշողութիւնն ի թոքն լինի, եւ արտաքս
վարողութիւնն ի լեղին լինի, եւ բնութեան ուժն ի պավապն
լինի, որ է դոնապանն: Եւ պավապն այն տեղացն ասեն, որ
գաբոնն ի ստամոքէն ի յաղիքն կուղարկէ:

Կերպ աղէճորտերուն եւ յօրինվածոցն նոցին

Գիտացի՛ր, որ յօրինվածքն եւ էութիւն աղէճորտերուն՝
որպէս գետ ստամոքն. եւ ամէն աղէճորտերն Զ են. եւ Գ
վերինն է, բարակ է եւ նօսր, եւ Գ վարինն՝ թանձր եւ հաստ
եւ լան է: Եւ այն Գ վերին աղէցն որ բարակ են՝ նա առաջինն
ասեն միայիսնայ շարիայիայ, որ է երկանութիւն ԺԲ մատ,
ամէն մարդու իր մատօքն, թէ՛ մեծ է եւ թէ՛ փոքր է. եւ այլ

պագի աղէստանն փատուտ են եւ ծուռ եւ ճուկ են. բայց այս աղիքն որ ժԲ մատ են՝ ըղորդ է եւ ինքն ի ստամոքն կիպ է. եւ այն է՝ որ պավապ ասեն: Եւ Բ աղէցն անունն սայիմ ասեն: Այս աղէցն այնոր համար սայիմ ասեն, որ ի ժիր ինքն պարապ է եւ դատարկ ի կերակրէ եւ աւելվածոց. եւ այնոր համար դատարկ է այս աղիքս, որ կերակուրն շուտ անցնի յիրմէն եւ չի յեմել յինքն: Եւ Գ-ին ամայ այիտի գաղ աասեն, եւ ինքն փաթութ-փաթութ է այնոր համար, որ կերակուրն ի յինքն շատ արգելի: Եւ այլ Գ աղիքն որ հաստ են՝ մէկին ասեն ավար. եւ ինքն աղիք մն է հաստ, եւ Ա բերան ունի. եւ աղքն որ ի յայն տեղացն որ լցվի աղիքն եւ այլվի յայն տեղացն ելնէ, եւ ինքն որպէս քէսայ է: Եւ Բ-ին ավլի դուլին ասեն. եւ ինքն աղիք մն է հաստ եւ ամուր. եւ գկերպն գամենուն յիշած է: Եւ Գ-ին ասեն ամայի մուստաղիմ, եւ ինքն աղիք մն է հաստ եւ ըղորդ. քան գամէնն լան եւ մեծ է. եւ մէկ ծարն ի նստոյտեղն ի կից է:

Այլ ինացի՛ր, որ արարիչն Աստուած գայս աղէստանս ծուռ եւ տափակ է ստեղծել, որ կերակուրն ի յամէնուն մէջն կենայ եւ գուծն առնու եւ շուտ ելանէ ի յարտաքսն. եւ յամէն ժամ մարդուն կերակուրն ուտել չի պիտանայ: Եւ վարի աղէցն հաստ լինալուն պատճառն այն է, որ աղքն այն աղէստանն արգելի եւ չի պիտենայ որ յամէն ժամ մարդն ի յարտաքս ելանէ. եւ թէ բարակ լինար՝ անճարակ էր, պիտէր որ ի դուրս ելանէր շուտ-շուտ, եւ մարդուն ամէն օր գէտ լուծման դեղի պէս գործ դնէր: Եւ այս ամէն աղէցն ի վերի ծարն ի կրծոցն ի ներքեւն ի ստամոքն ի կից է: Եւ ի յայս

կարճաբանենք, որ կարդացողքն չի նեղանան եւ յոգնին: Եւ Բրիստոսի փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Կերպ ստեղծման հալաբշտին թէ որպէս է

Գիտացի՛ր, որ հալաբշտին բնական տեղիքն ի յաճուկին ներքեւն է, եւ ինքն որպէս շիշայ է եւ վիզ ունի. եւ վիզն բարակ եւ մէջն լան. եւ այնոր համար այսպէս է որ զգոզն շատ առնու, եւ ամէն ժամ մարդ ի գոզել չերթայ: Եւ էութիւն բշտին պինտ է եւ ամուր է, այնոր համար, որ տաքութիւնն եւ սրութիւնն սաֆրային որ ի գոզն կու խառնի՝ նա զէն չի առնէ. եւ իր բերանն կտոր մի միս կայ: Եւ այլ գիտացի՛ր, որ մէկ երակ սակից ի յերիկամն կից է, եւ մէկ երակ այլ ի ծածուկ մարմինն կից է. եւ այն Ա կտոր միսն որ ի հալաբշտին բերանն է՝ նա Բ իրքն կու պահէ, եւ յորժամ որ այն մսին եւ այն երկին վատուժութիւն հանդիպի՝ նա մարդն ի տեղն զոզէ եւ անպակաս գոզն կաթկթէ:

Եւ սակից ի վեր յիշենք զան զօղվածն որ ի մարդուն երեւելի դիհն է: Եւ փառք արարչին, ամէն:

Կերպ վասն կազմութեան աչացն թէ որպէս է

Գիտացի՛ր, որ արարիչն Աստուած զաչքն այնոր համար է ի փոս տեղ ստեղծեր, որ ամէն վնասէ ի զատ կենայ, եւ ինքն ի մեծ եւ պատուական զօղվածոցն է: Եւ զճակտին ոսկորն

քան գերեսինն անոր համար ի դուրս արաւ, որ ի պահապան լինի աշացն եւ անվնաս, եւ ահոկն ի վերէն իջնելու է աշացն՝ նա դարձուցանէ: Եւ այլ գունքն պահապան արար աշացն, եւ յորժամ մարդն գաշքն խփէ՝ նա արտեւանունքն պահապան լինի աշացն, որ վնաս եւ փոշի եւ մոխ ի յինքն չի հասնի:

Այլ գիտացի՛ր, որ տէր Աստուած գաշքն է տապաղայ է ստեղծեր եւ Գ գիճութիւն, եւ ամէն տապաղայ եւ ամէն գիճութիւն ցեղ մն է: Եւ առաջի տապաղին ասեն մութահիմայ. եւ ինքն երեսելի է եւ գաշացն ամէն եզերքն բռնել է, եւ ինքն նօսր է եւ խիստ խալիտակ է: Եւ Բ տապաղին զարնիէ ասեն. այնոր համար է, որ այս տապաղան պինտ է, որպէս եղջուրի նման է եւ գունն սպիտակ է: Եւ Գ տապաղին ասեն յանապի, այնոր համար, որ այս տապաղաս նման է խաղողի հատին, եւ ինքն քիչ մն ի դուրս է եկել եւ ի ներս չէ եկել եւ գունն ի սպիտակութիւն կու գարնէ: Եւ Դ տապաղային ասեն անքապութի, այնոր համար, որ ինքն նման է սարթուստին եւ նօսր է եւ նա ցանցառ, եւ գունն խիստ խալիտակ եւ պայծառ է: Եւ Ե տապաղին ասեն շապաքայ, այն է որ նման է ինքն տղին երեսին քողին, եւ ինքն խիստ նօսր է եւ բարակ է: Եւ Չ տապաղին ասեն սուլպիէ, եւ ինքն ամուր է քան զամէն տապաղային որ յիշած է: Եւ Է տապաղին ասեն մաշիմայ: Եւ ամէն մէկին զօրութիւն կայ աստուծով. ամէն:

Եւ զօրութիւն առաջի տապաղին այն է, որ գաշիչն եզերքն պատել է. բոլոր ի տեղն կենայ եւ չի ելնէ, եւ ի ժիր գաշքն պահէ աղէկ:

Եւ գօրութիւն Բ տապաղային այն է, որ գոտտուպաթի ճալիտին ի գարկուցն եւ ի վնասէ պահէ. եւ ինքն որպէս գծածկոց է:

Եւ գօրութիւն Գ տապաղային այն է, որ Բ-ում տապաղային կերակուր տայ. եւ զիր ամրութիւն ըռուտուպաթի ճալիտէն պահէ եւ ի ժիր գաշացն լոյսն պահէ, եւ յորժամ որ մարդն պայծառ եւ պսպղուն իրք տեսնէ՝ նա աշացն լոյսն չի ցրվի եւ ի ժիր ի տեղն կենայ:

Եւ գօրութիւն Դ տապաղային այն է, որ զերեք տապաղան կերակրէ եւ ըռուտուպաթի ճալիտին ի պնդութենէն եւ ի խոշորութենէն պահէ:

Եւ գօրութիւն Ե տապաղային այն է, որ գտեսութեան հոգուն ի ժիր պահապան լինի ի ըռուպաթի ճալիտուն եւ կերակրէ գոուպաթի գուգաճին իրնով:

Եւ գօրութիւն Չ տապաղային այն է, որ գոտտուպաթի ճալիտին ի շիրիեանին տաքութեան որ ի տապաղայի շապաքան է՝ նա պահէ եւ չի կալէ, որ իրենն շարժումն չայնէ:

Եւ գօրութիւն Է տապաղային այն է, որ ան վնասն եւ պնդութիւնն, որ աշիչն ի տանն ոսկորէն պինտ լինի՝ նա դարձուցանէ եւ գաշքն ի տեղն ամուր պահէ:

Եւ այլ գիտացի՛ր, որ այն Գ գիճութիւնն որ յիշեցի՝ յառաջի գիճութեան անունն պայիզէ ասեն, որ է ինքն իսպիտակ եւ գեճ որպէս հաւկիթի իսպիտակուց: Եւ այլ Բ գիճութեան ասեն ճալիտէ, եւ ինքն յիստակ է որպէս պաղ: Եւ Գ գիճութեան ասեն գուգաճի, եւ է ինքն յիստակ որպէս գապիկի հալած: Եւ այս ըռուտուպաթի ճալիտին աշացն ի մէջն

է, որ է տեսութիւն աշացն, որպէս որ բոլորակին մէջն դնես կէտ մի, եւ ինքն յիստակ է եւ պայծառ եւ փայլուն, եւ գինչ որ տեսնու՝ շուտով իմանայ. եւ իր կերակուրն ի ըռուտապաթի գուգաճուն է, այնոր համար որ ինքն ճալիտուն յետեն է, եւ ըռուտապաթի պայգին առջեն է. եւ ճալիտուն ի ժիր ի կից լինին մէկ մէկի, եւ զօդին շորութիւնն ի յիրմէն ի գատ պահէ: Եւ այլ գիտացի՛ր, որ այն Ե տապաղան որ ասացի՛ Գ տապաղան ի յառջեն է, ի ըռուտուպաթի ճալիտուն եւ պայգուն, եւ աշացն սեւութիւն երեքին մէջն է. եւ այն ջեղն որ մէջն փուճ է որ ի յղեղին առաջի փորոքէն է՝ ի յաչքն ի կից է մինչեւ ի ճալիտի գիճութիւն է եկել. եւ ի հուն աշացն պայծառութիւն եւ լոյսն. եւ այս ջղերս որ մէջն փուճ է, երբ մութն կու լինի՝ նա կու լաննայ, երբ լուս կու լինի՝ նա կու նեղնայ:

Եւ յորժամ որ այս ջղերս կու լաննայ՝ նա բնաւ ամենեւին աչքն չի տեսնուր. եւ շատ մարդիք կայ, որ աչքն լանցեր է եւ տափկցել է, իսկի չի տեսնար: Եւ բժշկապետքն այս ցառուս ինթիշար ասեն. եւ արարիչն Աստուած իսկի մարդուս գայս ցառուս չի տայ:

Եւ գլխուն կերպն եւ ըղեղան կերպն եւ իր ծածկոցնին եւ գայն երկու ջեղն, որ մէջն փուճ է, որ տաճիկն յասապի մուճավալ ասէ, եւ գլուսն այն լնելուն զճանապարհն որ ի յաչքն կու մտէ, եւ զգործն փարտանուն եւ գիճութեններուն – եւ գայս ամէնն հաւասար ի կերպ պիտի բերեմ եւ ցուցանեմ, որ կարդացողին եւ ուսանողին հեշտ լինի: Եւ զիս զանպիտան եւ զանարժան ծառայս յիշեցէ՛ք ի տէր, եւ Աստուած յիշէ զձեզ

ի միս անգամ գալուստն. ամէն:

ՀԱՐՑ: Զի՞նչ է որ տղայն գմերձն աղէկ տեսնու եւ ծերն գհեռին:

ՊԱՏԱՍԽԱՆԻ: Երկու լուսոյ երակն որ ասացաք ի յղեղէն գայ ի յաշքն դատարկ եւ անարիւն. այս Բ երակս թէ տաք է եւ չոր՝ նա մարդն ի մօտն աղէկ տեսնու եւ ի հեռուն վատ, որպէս տղայն: Եւ թէ այս երակս գէճ է եւ հով՝ ի հեռուն աղէկ տեսնու եւ ի մօտն վատ, որպէս ծերն: Եւ թէ այս Բ երակս կալուի՝ մարդն կուրանայ:

Կերպ յօրինվածոց ականջացն թէ որպէս է

Գիտացի՛ր, որ ձեւն ականջացն այսպէս որ արարիչն Աստուած այնոր համար է ստեղծել, որ լսէ զամէն ձայն եւ հասկանայ շուտով: Եւ ինքն որպէս նաւի ելքան է, եւ ծակն ականջացն ոլոր-ուլոր է, զէտ քեղիկոն. եւ Աստուած իր ողորմութենէն այնոր համար գայն հանց է արեր, որ վատ հողմն եւ կամ հող ի յինքն չի մտնու: Եւ ականջացն ջուրն այնոր համար է լեղի, որ իսկի անասուն եւ սողուն ի յինքն չի մտէ. եւ այն լեղի ջուրն սպանող է եւ ի մէկ ժամն կու սպանէ:

Կերպ ստեղծման քթին թէ որպէս է

Գիտացի՛ր, որ քթն երեսին շնորհքն է. եւ առանց քթին երեսն շնորհք չունի. եւ քթն մէջն Բ բաժին է: Եւ գիտացի՛ր,

որ այն ոսկորն գետ քամոց է, որ յառաջն յիշեցի զինքն, եւ ի յինքն Գ ծակ կայ. եւ յառաջին այն է, որ շնչին ճանապարհն է, եւ Բ այն է, որ գաղէկ եւ զվատ հոտն կարէ իմանալ, եւ Գ այն է, որ ծակովն կու իմանայ, եւ այն է որ գաւելվածն ի յղեղէն որ կու իջնու՝ եւ ի յայն ծակէն ի դուրս կու ելնէ եւ ըղեղն կու յստկի:

Կերպ շրթնացն լեզվին թէ որպէս է

Գիտացի՛ր, որ շրթունքն դուռն է բերնին, եւ ակոսան ընկերոդ է լեզվին. եւ ի գրուցելուն ժամն այն մարդն որ պոկունք չունենայ՝ նա զխօսքն աղէկ չի կարել գրուցել, թէ գրուցէ՝ նա մարդ աղէկ չի կարէ հասկնալ: Եւ արարիչն Աստուած զինքն ի քնքուշ ի կակուղ մտէ է ստեղծեր այնոր համար, որ մարդն զխօսքն կարենայ խօսիլ, եւ զհճութիւն յօրինեց ի յինքն, որ ի ժիր գէճ կենայ:

Եւ այլ իմացի՛ր, որ լեզուն այլ ի կակուղ եւ ի քնքուշ մտէ է այնոր համար, որ կարենայ շարժիլ եւ խօսիլ: Եւ լեզուն ակոսային ընկեր է, եւ յորժամ կերակուր ուտէ՝ զկերակուրն ի ներքեւ ակոսային բերէ. եւ թէ լեզուն չի լինար՝ նա կերակուրն չէր ի շարժիլ ի բերանն: Եւ լեզվին ներքեւն երկնի կայ որպէս շիրիանի. եւ ի ժիր այս երկնին ծարերն զհճութիւն պալղամին ի բերանն կու ժողվէր. եւ այս երկնուն ծարերուն բժշկապետքն սաքի պաթույ լուսպ ասեն. եւ ստեղծման պատճառն այս Բ երկին այն է, որ Բ պատճառ կայ. եւ Ա այն է, որ ի ժիր լեզուն գէճ կենայ, եւ թէ չոր լինի

լեզուն՝ դժարութեամբ խօսի. եւ Բ այն է, որ մարդն գշոր կերակուրն եւ գշոր հացն եւ գոր ինչ որ ծամէ չոր՝ նա այնէ եւ հեշտութեամբ կլնու. եւ թէ չոր լինի՝ նա դժարութեամբ կլնու: Եւ փառք Աստուծոյ եւ անմահին. ամէն:

Վասն ստեղծման ձեռացն թէ որպէս է

Գիտացի՛ր, որ արարիչն Աստուած քանի ցեղ է օգտութիւն եւ գորութիւն ի ձեռքն եղիր, եւ ազգի ազգի արուեստնի եւ աղէկ բաներ եւ սարկիկ եւ գրագիրութիւն եւ ծաղկագործութիւն, եւ ամէն իրք որ փշվի եւ աղէկ ձայն ածէ, եւ գուսնութիւն եւ զինչ որ սոցին նման է: Եւ Ե գգայութեան Ա այն է որ ի ձեռքն, գծանրութիւն եւ գթեթեութիւն, զմանր եւ զխոշորն ձեռօքն կու իմանայ: Եւ մարդուն ձեռքն որպէս գձագուն թեւն է եւ սարված է յինքն. եւ վաստակի, եւ գշարն որ ի յանձն գայ՝ նա ձեռօքն խափանէ, թէ բիր լինի եւ թէ գարկ. եւ ճշմարիտ ասպարն անձինն ձեռքն է. եւ ձեռացն գորութիւն շատ է: Եւ ես անչաք որ ասացի՝ նա ուսնողին եւ ուսցնողին հեշտ լինի եւ աղէկ հասկնայ զխօսքն. ամէն:

Կերպ յօրինվածոց ծծերուն թէ որպէս է

Գիտացի՛ր, որ ծծերուն միսն թոյլ եւ վատուժ միս է, եւ կայ ի յինքն շիրիանին երկնուն շատ երկնի. եւ կայ յինքն մէկ մէկի կից: Եւ գորութիւն ծծին այն է, որ գտղան կերակրէ, եւ պատճառն այն է, որ տղին կերակուրն ի մօրն ի փորն

յավելված արհիւնն է. եւ սրտին տաքութիւնն գայն յաւելուած արհիւնն ի յերկնուն ի մէջն կու եփէ, կու տանի ի յայն ճանփան, որ բնութիւն ծծին զինքն կու եփէ եւ իսպիտակ կու առնէ եւ ի յիր գուն կու դարձուցանէ: Որպէս որ տղին կերակուրն ի մօրն ի փորն յաւելուած արհիւնն՝ եւ կաթն այլ ի յաւելուած արհիւնէն է, որ ի յարգանդէն ի ճանապարհն ծծին գայ: Եւ յորժամ յաւելուած արհիւնն եփի պատեղվորի՝ նա կաթնկեր տղին գէն առնէ: Եւ թէ ձախ ծիծն թոշմի պատեղվոր կնկանն՝ գուշակէ, որ տղան աղջիկ է, եւ թէ աջ ծիծն թոշմի՝ գուշակէ որ կտրիճ տղայ ձգէ:

Կերպ ձվերուն եւ պատմութիւն

Գիտացի՛ր, որ ձվերն տուն է սերման, եւ ինքն կակուղ եւ իսպիտակ եւ ի ցանցառ մսէ է ստեղծած, եւ ի յամէն մէկէն Ա երակ ի յերիկամունքն կից է. եւ այն քնքուշ արհիւն երիկամացն ի յայն երակնովն ի ձուն կից է. եւ քիչ մն ալ կայ ի յինքն ի շիրիանուն երկնուն ի կից. եւ այն արհիւնն, որ երիկամացն ի ձուերն իջնու եւ կիսաեփ լինի այն երակնին, եւ յորժամ որ ի ձուն իջնու՝ լման եփի եւ թանձրանայ եւ կից յիրար եւ իսպիտակ լինի, եւ նոյնպէս յաւելուած արհիւնն որ ի ծիծն երթայ, եւ արհիւնն դառնայ ի կաթ: Եւ բարակ եւ յերկան ճանապարհ մն կայ ի ձուէն ի ծածուկ մարմինն ի կից, եւ ինքն ճանփայ է սերմին, որ ի ծածուկ մարմինն գայ: Եւ յորժամ սերմն ի ձուն եփի՝ եւ ժողովի եւ կենայ, եւ յայն ժամն որ պիտեւան լինայ՝ ի ծածուկ մարմնին ի ծարէն ի դուրս գայ:

Конец ознакомительного фрагмента.

Текст предоставлен ООО «ЛитРес».

Прочитайте эту книгу целиком, [купив полную легальную версию](#) на ЛитРес.

Безопасно оплатить книгу можно банковской картой Visa, MasterCard, Maestro, со счета мобильного телефона, с платежного терминала, в салоне МТС или Связной, через PayPal, WebMoney, Яндекс.Деньги, QIWI Кошелек, бонусными картами или другим удобным Вам способом.